4. <http://www.dissercat.com/content/obuchenie-analizu-uchebnika-inostrannogo-yazyka-v-protsesse-metodicheskoi-podgotovki-budushc#ixzz4iluh0cE9>

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

ABSTRACT

THE CONTENT AND IMPLICATIONAL CHARACTERISTICS OF RELIGIOUS CONCEPT

The article considers the content and implicational characteristics of the religious concept from the viewpoint that the concept is the unit of mentality. Contrary to the traditional method that deals with the linguistic thought only, the concept approach provides an opportunity both to consider and teach the units of cognitive thinking. Several definitions to “concept” are given in the article that enables us to introduce clearly the word-concept correlation, the implicational and intentional fields of the concept and the conceptions acting in the mentioned fields. Thus teaching of religious sublanguage via the concept approach will enable to organize simultaneous teaching of language, mentality and culture of the native speakers.

Key words: *concept, concept approach, implicational, intentional, associative field, word-concept correlation conception, religious sublanguage, concept structure.*

РЕЗЮМЕ

КОНТЕНТНЫЕ И ИМПЛИКАЦИОННЫЕ ОСОБЕННОСТИ РЕЛИГИОЗНОГО ПОДЪЯЗЫКА

В статье рассматриваются контентные и импликационные особенности концепта, так как концепт является единицей менталитета. Вопреки традиционной методике, которая изучает только единицы языка, когнитивный подход позволяет также изучать единицы менталитета. В статье приведены дефиниции “концепта”, которые четко определяют соотношение “слово-концепт”, импликационные и интенциональные поля концепта, а также концепции, действующие на этих полях. Таким образом, обучение религиоз-

ному подъязыку подразумевает одновременное обучение языку, мышлению и культуре носителей языка.

Ключевые слова: концепт, концептуальный подход, импликационал, интенсионал, ассоциативное поле, концепция, религиозный подъязык, структура концепта.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է հասկացույթի բովանդակային և գործառական բնութագրերը, քանի որ հասկացույթը մտածելակերպի /մենթալիտետի/ միավոր է: Հասկացութային մոտեցումը, ի տարբերություն ավանդական մեթոդիկայի, որը գործ ունի լեզվական գիտակցության հետ, օգնում է ուսումնասիրել և յուրացնել ճանաչողական գիտակցության միավորները: Հոդվածում տրված են հասկացույթի կառուցվածքի մի քանի սահմանումներ, որոնք հստակորեն ներկայացնում են բառ-հասկացույթ հարաբերակցությունը, հասկացույթի միջուկային և զուգորդական դաշտերը և այստեղ գործող հասկացությունները: Հասկացութային մոտեցմամբ անգլերեն կրոնական ենթալեզվի ուսուցումը ենթադրում է լեզվի, գիտակցության և մշակույթի միաժամանակյա ուսուցում:

Բանալի բառեր՝ հասկացույթ, հասկացութային մոտեցում, իմպլիկացիոնալ, ինտեսիոնալ, զուգորդական դաշտ, բառ-հասկացույթ հարաբերակցություն, հասկացություն, կրոնական ենթալեզու, հասկացույթի կառուցվածք:

Հասկացույթը, ըստ ճանաչողական մոտեցման, գիտակցության, մտածելակերպի /մենթալիտետի/ միավոր է: Այդ համատեքստում բառի նշանակությունը լեզվական գիտակցության արդյունք է: Փաստորեն, ավանդական մեթոդիկան գործ ունի լեզվական գիտակցության հետ, իսկ հասկացութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել և յուրացնել ճանաչողական գիտակցության միավորները:

Ասվածը ավելի ակնառու ներկայացնելու համար, համեմատել ենք հասկացույթի մի քանի սահմանումներ, որը հնարավորություն կընձեռի հստակորեն ներկայացնել բառ-հասկացույթ հարաբերակցությունը, անցումը բառից դեպի հասկացույթ, ինչպես նաև այն, թե ինչպես են


փոխվում մեթոդական մոտեցումները վարժությունների և տեքստերի ընտրության նկատմամբ հասկացության մոտեցման կիրառման պարագայում:

Ս. Գ. Վորկաչովը հասկացության մեջ առանձնացնում է հասկացական բաղադրիչը /հատկանիշային և սահմանող կառուցվածք/, պատկերային բաղադրիչը /ճանաչողական փոխաբերություններ, որոնք պահում են հասկացության գիտակցության մեջ/, նշանակության բաղադրիչը /հասկացության ծագումնաբանական, զուգորդական բնութագրերը, որոնք որոշում են նրա տեղը լեզվի բառային-քերականական համակարգում/ (Воркачев, 2004: 7):

Սույն կադապարն օգնում է բացահայտել բառային և հասկացության մոտեցման տարբերությունները և ընդհանուր կողմերը: Ակնհայտ է, որ հասկացության պատկերային բաղադրիչը, ըստ ավանդական բառապաշարի ուսուցման հարացույցի, հաշվի է առնվում ինպիցիտ, ոչ բացահայտ, քանի որ փոխաբերությունները դիտարկվում են բառերի բազմիմաստության, հոմանիշության, ռճական տարբերությունների բացահայտման համատեքստում:


Գծապատկեր 1

Հասկացության հիմնական բաղադրիչները ըստ Վորկաչովի



Վ. Ի. Կարասիկը դիտարկում է հասկացության կառուցվածքը իմաստաբանական և արժեբանական տեսանկյուններից: Նա առանձնացնում է հասկացության մեջ պատկերային-ընկալողական, հասկացական /տեղեկատվական-փաստագրական/ և արժեքային բաղադրիչները /գնահատական և վարքագծային նորմեր/ (Карасик, 2004: 118): Սույն մոտեցումն ավելի շատ է շեշտադրում հասկացության և բառային մոտեցումների տարբերությունները, քանի որ բառային մոտեցման դեպքում արժեքային բաղադրիչը կարող է հանդես գալ միայն ներակա:

Հասկացության հիմնական բաղադրիչներն ըստ Կարասիկի



Մ. Վ. Նիկիտինն առանձնացնում է հասկացության մեջ պատկերը, հասկացությունը և ճանաչողական և գործաբանական իմպլիկացիոնալները (Никитин, 2004: 53-56):

Ինչպես հայտնի է լեզվաբանությունից, «հասկացությո՜ւնը» իմացական լեզվաբանության հիմնական կարգն /կատեգորիա/ է: Հասկացությո՜ւնը հնարավորություն է տալիս ուսումնասիրել լեզվի, գիտակցության, գիտակցության և մշակույթի, մարդու մենթալ առանձնահատկությունների կապը, որը արտացոլվում է ազգային լեզվում (Пименова, 2004: 87):

Լեզվական միջոցների այն ամբողջությունը, որը առարկայացվում է հասարակության զարգացման որոշակի փուլում, սահմանվում է որպես հասկացության անվանողական դաշտ: Անվանողական դաշտը տարբերվում է լեզվաբանության մեջ առանձնացվող բառապաշարի խմբերից՝ բառաիմաստային խմբից, բառաիմաստային դաշտից, հոմանիշային շարքից, բառադարձվածաբանական դաշտից, զուգորդական դաշտից նրանով, որ այն ունի համալիր բնույթ և ներառում է բոլոր նշված խմբերը (Попова, 2007: 314):

Ցանկացած կրոնական հասկացության բովանդակային բաղադրամասերի վերլուծությունը հաստատում է ասվածը: Օրինակ՝ «faith – հասկացությո՜ւնը մեծ հաճախականությամբ գործածվող բառ է տարբեր բառաշերտի ոճերում և նրա հոմանիշներն են *trust, confidence, belief* բառերը:

Faith հասկացույթն ուսուցողական նպատակներով կիրառելն արդյունավետ է այն առումով, որ այն ներառում է վերը նշված բառային խմբերը: Այն նշանակում է հավատ Աստծո հանդեպ, խորը հավատի զգացում (a strong feeling of trust or confidence in someone or something; belief and trust in God):

Առօրյա-խոսակցական մակարդակում ուսանողները դժվարությամբ են տարբերակում նշված հասկացույթի զուգորդական դաշտում գործառնող այլ հասկացությունները: Ակնառու օրինակ է trust հասկացությունը, որը նշանակում է կայուն վստահություն ինչ որ բանի նկատմամբ (a strong belief in honesty, goodness; to believe that someone is honest or will not do anything bad or wrong; to be sure that something is correct or right) այն առումով, որ այն ներկայացնում է «հավատ» և «վստահություն» հասկացությունները, որոնցից երկրորդը «Faith» հասկացույթի իմաստային դաշտում «միջուկային» իմաստից բավականին հեռու է՝ այսպես ասած՝ «սահմանամերձ»:

Confidence հասկացությունը նշանակում է վստահության զգացում ինչ-որ բանի, ինչ-որ մեկի նկատմամբ/հանդեպ (the feeling that you can trust someone or something to be good, work well, or produce good results; the belief that you have the ability to do things well or deal with situations successfully):

Belief հասկացությունը նույնպես հավատի հոմանիշ է՝ զգացում, որ ինչ-որ բան բացարձակ ճշմարտություն է (the feeling that something is definitely true or definitely exists; the feeling that something is good and can be trusted; an idea that you believe to be true, especially one that forms part of a system of ideas):

Համապատասխան վերլուծությամբ լեզվաբանները պարզել են, որ նշված հասկացություններ ներկայացնում են *faith* հասկացույթի միջուկային դաշտի տարբեր չափումները:

Անգլախոս լեզվակիրը տվյալ հասկացույթին առնչվող /իմաստային և զուգորդական մակարդակներում/ առաձները, առակները, տարբեր ասույթները գործածում է իր խոսքում, անկախ այն բանից նա լեզ-

վաբան է, թե ոչ: Նույն հասկացույթը ներկայացնում է բազում առաձներ, ասույթներ և այլն՝

Faith is like radar that sees through the fog. – **Corrie Ten Boom**

Faith is the art of holding on to things your reason has once accepted in spite of your changing moods. – **C.S. Lewis**

Faith is to believe what you do not see; the reward of this faith is to see what you believe. – **Augustine**

Take the first step in faith. You don't have to see the whole staircase, just take the first step. – **Martin Luther King, Jr.**

Jesus turned, and seeing her he said, “Take heart, daughter; your faith has made you well.” And instantly the woman was made well. ~Jesus the Messiah (Matthew, 9:22) (<http://www.whatchristianswanttoknow.com/21-amazing-faith-sayings/#ixzz3CNNvduIg>).

Faith հասկացույթի զուգորդական դաշտում կարելի է հանդիպել բազում միարմատ բառեր՝ բայեր, ածականներ, մակբայներ: Դրանց ուսուցումը էլ ավելի արդյունավետ է դառնում, երբ դրանք ներմուծվում են կոնկրետ խոսքային իրադրությունում կամ համատեքստում՝ ըստ դրանց կիրառման ռճաժանրային առանձնահատկությունների:

Ուսանողները հեշտությամբ են յուրացնում *to believe, to trust, to confide* բայերը, *faithful, trusty, trustful, trustworthy, believable, confident* ածականները, *trustily, faithfully, believably* մակբայները: Սակայն, երբ նրանք սովորում են դրանք առաձների կամ առակների միջոցով, յուրացումն ավելի է հեշտանում, օրինակ՝

Put your trust in God but exert yourself - Աստծո վրա հույսդ դիր, բայց ինքդ էլ գործիր

On trust – պարտք տալ, ապառիկ տալ

Relationships built on trust - վստահության վրա հիմնված հարաբերություններ

To sell or buy goods on trust - Ապառիկ գնել կամ վաճառել

Take smb. on trust -վստահել ինչ-որ մեկին

Արդյունավետ է ներմուծել տվյալ հասկացությից ածանցված բառերը, թե իմաստային, թե ձևաբանական մակարդակներում՝ *confidentiality, believability, faithfulness, reliance, self-sufficiency, self-assurance, smugness, certitude, certainty, conceit, aplomb, opinion, religion, hope*:

Նպատակահարմար է նաև տվյալ հասկացությի ճանաչողական հատկանիշներ արտահայտող ածականների հետևողական ներմուծումը և յուրացումը՝ *absolute, great, enormous, boundless, total, deep, profound, strong, steadfast, enduring, firm, unshakable, irresistible, persistent, fanatic*:


Հասկացությային մոտեցման արդյունավետությունը հիմնավորվում է նաև նրանով, որ ուսանողները սովորում են ոչ միայն տվյալ հասկացությի միջուկային, մերձակա, այլև հեռակա կամ միջուկից հեռու գտնվող բառերը՝ *true, loyal, constant, attached, dependable, honest, straight, honorable, firm, incorruptible, sure, staunch, unwavering, devoted, unswerving*:

Լեզվաբանության մեջ իմպլիկացիոնալը մեկնաբանում են որպես գուգորդական դաշտ, ի հակադրություն ինտեսիոնալի, որը կազմում է հասկացությի միջուկը: Մեթոդական նպատակներով կարևոր է այդ հասկացությունների մեկնությունը, քանի որ կրոնական հասկացությունների ուսումնասիրությունը ավելի շատ վերաբերում է գուգորդական դաշտին և ոչ թե հասկացությի միջուկին: Այստեղ խոսքը վերաբերում է տարբեր ճանաչողական հասկացությունների յուրացմանը, որոնք գուգորդվում են նույն հասկացությի տիրություն: Չնայած լեզվաբանները աշխատում են հասկացությը չկադապարել, հաշվի առնելով ինտեսիոնալի և իմպլիկացիոնալի հարաբերակցության շարունակական փոփոխությունը, նպատակահարմար է հասկացությների տեսակների դասակարգումն օգտագործել առաջին, բառ-հասկացությ հարաբերակցությունը ներկայացնելու համար, երկրորդ. հասկացությային մոտեցման նպատակահարմարությունը հիմնավորելու համար: Լեզվաբանները առանձնանցնում են հասկացությների հետևյալ տեսակները՝ զգայական

պատկեր, սխեմա, հասկացություն, պատկերացում, պրոտոտիպ կամ նախատիպ, ֆրեյմ, սկրիպտ և գեշտալտ (Стернин, Попова: 2003):

Ակնհայտ է, որ բառի մակարդակում այդ հասկացությունները գործուն չեն: Համապատասխանաբար, կրոնական հասկացության ուսումնասիրությունը բերում է նշված հասկացությունների յուրացման լեզվական մակարդակում: Օրինակ՝ *Աստված* հասկացությոը հայերեն և անգլերեն լեզուներում կարող են գուգորդել նույն և տարբեր զգայական պատկերներ:

Գծապատկեր 3.



Հասկացությային մոտեցմամբ անգլերեն կրոնական ենթալեզվի ուսուցումը ենթադրում է լեզվի, գիտակցության և մշակույթի միաժամանակյա ուսուցում, քանի որ հասկացությոը համարվում է մտածելակերպի միավոր, որը կիրառվում է նշված ոլորտներն ուսումնասիրելու համար (Карасик, Слышкин, 2001: 75):

Հասկացության զգայական բաղադրիչը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրության առարկա դարձնել այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են կրոնը, եկեղեցին, Աստվածաշունչը, որոնք ընկալման մակարդակում տարբեր մարդկանց մոտ տարբեր մեկնաբանություններ ունեն:

Դրա հետ մեկտեղ Ս. Վ. Կուլյակինը նույնացնում է հասկացությոը և բառը, առ այն, որ «հասկացությոը ներառում է բառայիններ, որոնց նշա-

նակությունը ներկայացնում է ազգային լեզվական գիտակցության բովանդակությունը» (Кузлякин, 2005: 172):

Հաշվի առնելով ներկայացված մոտեցումները կարելի է եզրահանգել, որ միայն կրոնական բառապաշարի ուսուցումը կազմակերպելով հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ ուսանողները կարողանան հանգամանորեն ուսումնասիրել անգլախոս եկեղեցիականների, ինչպես նաև հավատացյալների գիտակցությունը և մշակույթը: Դա ենթադրում է նախ և առաջ համապատասխան գեղարվեստական գրականության, մամուլի ընթերցանություն ոչ միայն անգլերեն, այլև հայերեն լեզուներով: Ուսանողները պետք է հնարավորություն ունենան համեմատել, հակադրել, վերլուծել հայկական և անգլիական եկեղեցակրոնական իրողությունները:

Ամեն մի մոդուլի շրջանակում հստակորեն պլանավորվում է համապատասխան գրականության ընթերցանությունը հայերեն և անգլերեն լեզուներով: Հայերեն ընթերցանությունն օգնում է ժամանակ շահել, քանի որ անգլերեն դժվար տեքստերի ընթերցանությունը շատ ուսանողների մոտ վերածվում է բառարանի հետ յուրահատուկ աշխատանքի: Հատկանշական է այն, որ ուսանողները սիրում են ընթերցանության ժամանակ նոր բառեր դուրս գրել, անգամ սերտել: Այդպիսի աշխատանքը էքստենսիվ, դանդաղ, ժամանակատար է և ընդհանուր առմամբ չի զարգացնում ուսանողների հենքային, հանրամշակութային գիտելիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Воркачев С.Г.** (2004), Счастье как лингвокультурный концепт М.: ИТДГК «Гнозис», с. 7
2. **Карасик, В.И.** (2004), Языковой круг: личность, концепты, дискурс / В.И. Карасик. – М.: Гнозис, с. 118
3. **Никитин М.В.** (2004), Развернутые тезисы о концептах// Вопросы когнитивной лингвистики. Тамбов: Общ.обществ.орг.РАЛК, № 1 (001), С. 53-56.

4. **Пименова М.В.** (2004), Душа и дух:особенности концептуализации. - Кемерово: ИПК «Графика, с. 87
5. **Попова З.Д.** (2007), Стернин И.А. Когнитивная лингвистика. М.: АСТ: Восток-Запад, с. 314
6. (<http://www.whatchristianswanttoknow.com/21-amazing-faith-sayings/#ixzz3CNNvdulg>)
7. **Попова З.Д., Стернин И.А.** (2003), Очерки по когнитивной лингвистике. - Воронеж: Изд-во "Истоки".
8. **Карасик В.И. Слышкин Г.Г.** (2001), Лингвокультурный концепт как единица исследования // Методологические проблемы когнитивной лингвистики: Сб. науч. тр. / Под ред. И. А. Стернина. - Воронеж: ВГУ, С. 75
9. **Кузлякин, С.В.** (2005), К вопросу о толковании понятия концепт в современной научной парадигме / С. В. Кузлякин // Русистика и современность: в 2 т. Т. 1. — СПб.: Петерб. Востоковедение, С. 172

**«ՀԱՄՈՂՈՒՄ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՈՍՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

ABSTRACT

**THE CHARACTERISTICS OF THE CONCEPT “PERSUASION” IN
THE CONTEXT OF POLITICAL DISCOURSE**

The present article examines the popular linguistic concept of persuasion, which is commonly understood as a certain influence of the author's oral or written communication on the recipient with the aim of convincing the latter to either perform or not certain actions.

Key words: *persuasion, political discourse, adresant, addressee, communication, manipulation, speech impact, argumentation.*

РЕЗЮМЕ

**ОСОБЕННОСТИ ПОНЯТИЯ «ПЕРСУАЗИВНОСТЬ» В
КОНТЕКСТЕ ПОЛИТИЧЕСКОГО ДИСКУРСА**

В данной статье предпринимается попытка рассмотреть такое популярное лингвистическое понятие как “убеждение (персуазивность)”, которое понимается как определённое влияние автора устного или письменного сообщения на реципиента с целью побудить его к выполнению или невыполнению определённых действий.

Ключевые слова: *персуазивность, политический дискурс, адресат, адресант, коммуникация, манипуляция, речевое воздействие, аргументация.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում քննարկել լեզվաբանական այնպիսի հայտնի հասկացություն, ինչպիսին է «համոզումը», ինչը ընկալվում է որպես հեղինակի գրավոր կամ բանավոր հաղորդագրության որոշակի ազդեցություն լսողի վրա՝ նպատակ ունենալով նրան համոզել՝ կատարելու կամ չկատարելու որոշակի գործողություններ:

Քանալի բառեր՝ *համոզում, քաղաքական խոսույթ, հասցեատեր, հասցեագրող, հաղորդակցություն, մանիպուլյացիա, խոսքային ներազդում, փաստարկում:*

Քաղաքական տեխնոլոգիաների զարգացումը, զանգվածային տեղեկատվական միջոցների առաջատար դերակատարությունը, վերջին ժամանակահատվածում աշխարհում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները նպաստում են, որպեսզի գիտական շրջանակներում մասնագետներն իրենց ուշադրությունը սևեռեն քաղաքական հաղորդակցության ոլորտի հիմնախնդիրների վրա և հետազոտություններ իրականացնեն քաղաքական խոսույթի շրջանակներում:

Քաղաքական գործունեությունը մշտապես մեծ դեր է խաղացել հասարակության կյանքում: Քաղաքական որոշակի դիրքորոշումներից և իրավիճակից է կախված տվյալ պետության դերակատարությունը և տեղը միջազգային ասպարեզում, նրա փոխհարաբերություններն այլ պետությունների հետ և դերը համաշխարհային հանրության գործունեության մեջ:

Սակայն, երկրի իմիջի սահմանման հարցում կարևոր դեր է խաղում նաև տվյալ պետության քաղաքական գործիչների կողմից այն ներկայացնելու միջոցները:

Քաղաքական խոսույթի երևույթը հետաքրքրություն է վայելում գիտության այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են սոցիոլոգիան, մշակութաբանությունը, սոցիալական հոգեբանությունը, ինչպես նաև զանգվածային հաղորդակցության տեսության և ներազդման տեսու-

թյան մասնագետների շրջանում, ինչը վկայում է վերոհիշյալ երևույթի բազմակողմանիության մասին: Քաղաքական խոսույթը քաղաքական լեզվաբանության ամենակարևոր տերմիններից մեկն է, որի հիմնական խնդիրն է լեզվի և մտածողության միջև փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, ինչպես նաև հասարակության քաղաքական իրավիճակի ուսումնասիրությունը պատմական կոկրետ ժամանակահատվածում: Լեզվաբանության մեջ քաղաքական խոսույթը ներկայացված է որպես բազմակողմանի երևույթ, որի արդյունքում ձևավորվել է տվյալ տերմինի երկու հիմնական մեկնաբանություն: Նեդ իմաստով՝ այն տեքստ է, որի նպատակները համընկնում են քաղաքական խոսույթի հետ, այն է՝ քաղաքական իշխանությունը նվաճելը, պահելը, իրականացնելը, և որը սահմանափակվում է քաղաքականության ոլորտով: Լայն իմաստով՝ այն շփման ձևերի ամբողջություն է, որոնցից քաղաքականության ոլորտին է վերաբերում հետևյալ բաղադրիչներից առնվազն մեկը՝ սուբյեկտ, հասցեատեր կամ հաղորդագրության բովանդակություն: Ըստ Ա.Չուդինովի՝ քաղաքական խոսույթի բովանդակության մեջ պետք է մտնեն հասցեագրողի և լսողի գիտակցության մեջ առկա բոլոր բաղադրիչները, որոնք ներազդում են խոսքի ծագման և ընկալման վրա (Чудинов, 2003: 18):

Հարկ է նշել, որ քաղաքական խոսույթի շարքին անհրաժեշտ է դասել նաև այն տեքստերը, որոնց բովանդակությունը հաշվի է առնվում տվյալ տեքստի հեղինակի և ընդունողի կողմից, նպատակային կարգավորումները, քաղաքական հայացքները, նպատակները և հեղինակի անձնային հատկանիշները, այդ տեքստի ընկալման առանձնահատկությունը, քաղաքական իրադրությունը, կոնկրետ քաղաքական իրավիճակը: Ըստ Ե. Շեյգալի՝ քաղաքական խոսույթի առաջատար կարգավորիչ գործառույթ է հանդիսանում վերջինիս օգտագործումը որպես քաղաքական իշխանության գործիք՝ իշխանությունը զավթելու, պահպանելու, իրականացնելու, վերաբաշխելու նպատակով (Шейгал, 2000: 35): Քաղաքական խոսույթին են վերագրում քաղաքական գործիչների հետ հարցազրույցները, բանավեճերը, միտինգները, նշանաբանները,

պարսավագրերը և այլն: Այնուհանդերձ, վառ արտահայտված համոզման գործառույթ և դերակատարություն ունեն քաղաքական գործիչների ելույթները, խորհրդարանական բանավեճերը, քարոզչական բրոշյուրները, նշանաբանները, երբ խոսողը ձգտում է ոչ այնքան տեղեկացնել լսողին, այլև որոշակի մտադրություններ, վստահություն առաջացնել իր հանդեպ, հուզական ներագրում և ազդեցություն գործել հասարակական կարծիքի վրա՝ որևէ երևույթի և իրադարձության առնչությամբ, որոշակի գործողությունների դրդել, կարծիքներ ձևավորել մարդկանց մոտ: Քաղաքական գործիչների առջև դրված առաջնահերթ խնդիրն է ձեռք բերել լսարանի համակրանքը, հավակնել քաղաքացիների աջակցությունը: Նման խնդիրները լուծելու համար քաղաքական գործիչները դիմում են լեզվական միջոցների գործածությանը, որը թույլ է տալիս իրականացնել հաղորդակցական գործառույթներ, որոնցից մեկն է հանդիսանում համոզումը:

Համոզման խնդիրներին առնչվող գիտական գրականության վերլուծությունը թույլ է տալիս սահմանազատել երկու ուղղություններ սովյալ երևույթի ուսումնասիրության շրջանակներում՝ հոգեբանական և լեզվաբանական: Հայտնի է, որ «համոզում» տերմինը (լատ. *persuasio*, անգլ. *persuasion*, գերմ. *Persuasion*– համոզում) հարաբերականորեն վաղուց է ներմուծվել լեզվաբանության գիտական շրջանառության մեջ: Տվյալ հասկացության օգնությամբ նկարագրվող լեզվի և խոսքի երևույթները ուսումնասիրվել են ոճագիտության, տեքստի լեզվաբանության, հոգելեզվաբանության, խոսքային ներագրման տեսության և փաստարկման տեսության շրջանակներում:

Համոզողական հաղորդակցությունը իրականացվում է համոզողական կոնկրետ գործողությունների միջոցով. համոզում, տարհամոզում, հորդորում: Չնայած այս հասկացությունները շատ հաճախ կարող են փոխարինել միմյանց, այնուամենայնիվ, նրանց միջև կա էական տարբերություն: Համոզումը խոսքային ներագրման տեսակ է լսողի գիտակցության վրա, որն իրագործվում է գրավոր կամ բանավոր հաղորդագրության հեղինակի կողմից՝ հաղորդակցի կարծիքը, մտածելակեր-

պը, մոտեցումը փոփոխելու կամ ինչ-որ բանում համոզելու նպատակով: Տարհամոզումը տարբեր աղբյուրներից և տարբեր իրավիճակներից ստացված լրացուցիչ տեղեկատվության ազդեցության ներքո նախնական ձևավորված համոզման փոխարինումը կամ ձևափոխումն է: Հորդորումը հասցեագրողի շահերի, դիրքորոշումների ամրապնդման միջոց է: Համոզողական հաղորդակցության մեկ այլ կարևոր առանձնահատկություններից մեկն է հանդիսանում նաև հորդորման, համոզման և տարհամոզման մարտավարությունների փոխազդեցությունը: Եթե համոզումը և տարհամոզումը հիմնվում են բանական փաստարկման և հիմնավորման վրա, ապա հորդորումը՝ հուզական ուղորտի վրա:

Հետևաբար, որքան արտահայտչական լինի հասցեագրողի խոսքային ներազդումը, այնքան այն ավելի քիչ փաստարկված կլինի և, համապատասխանաբար, համոզման և տարհամոզման ազդեցությունն ավելի տևական կլինի, քան թե՝ հորդորմանը:

Ըստ Ա.Գոլոդնովի՝ համոզողական հաղորդակցությունը իրագործվում է տեքստի որոշակի տիպերի հիման վրա և մարդկանց փոխհամագործակցության՝ պրակտիկայով ամրագրված ձև է (Голоднов, 2003: 23): Լեզվաբանը նշում է, որ համոզողական հաղորդակցությունը հաղորդակիցների հոգեկեզվական հարաբերակցման հատուկ տիպ է, որի դեպքում հաղորդողն իրագործում է գլխավորապես խոսքային ներազդում՝ հաղորդակցի գիտակցության վրա:

Համոզողական խոսքային գործողության իրագործման ժամանակ ի հայտ են գալիս երկու հաղորդակցա-գործաբանական նպատակ.

1. ներազդել հաղորդակցի գիտակցության, նրա կարծիքի և գնահատականի վրա:

2. դրդել հաղորդակցին կատարել որոշակի գործողություններ, փոփոխել նրա վարքը:

Համոզման խնդիրը ուսումնասիրողները ներազդման իրականացման և համոզողական արդյունավետության հասնելու համար հենքային են համարում հետևյալ երկու գործոնների առկայությունը. մտավոր, որը հիմնվում է բանական փաստերի վրա և ներգործող, որը հիմնվում

է երևակայության, սուբյեկտիվության, հուզականության, կարծրատիպերի վրա:

Այլ կերպ ասած՝ համոզողական ներագրման արդյունավետության հասնելու համար հարկավոր է շեշտը դնել ոչ միայն բանական հիմնավորման վրա, այլ նաև հաշվի առնել ներագրման հուզական-գնահատման միջոցները, այսինքն՝ սուբյեկտիվ գործոնները: Համոզողական գործողության առանձնահատուկ տեսակ է հանդիսանում մանիպուլյացիան: Այն ենթադրում է հոգեբանական և խոսքային ներագրում լսողի վրա որոշակի գործողություններ կատարելու գաղտնի, ոչ բացահայտ հարկադրանքով: Խոսքային մանիպուլյացիայի ժամանակ մասնակիցը կառավարվում և ուղղորդվում է իր վերաբերմունքի ձևավորման հարցում՝ չգիտակցելով հաղորդակցական իրադրության պայմաններն ու նպատակները, ընդ որում հաղորդողը պահպանում է իր իրական նպատակների գաղտնիությունը լսողի առջև: Քանի որ համոզումը հանդիսանում է հաղորդակցական գործողության առանձնահատուկ տեսակ, հարկավոր է նաև նշել համոզողական հաղորդակցական-խոսքային գործողության հարաբերությունների բնույթի և հաղորդակցության ոլորտի, գործառական ոճի առանձնահատկությունների մասին: Ակնհայտ է, որ համոզողական հաղորդակցությունը իրականացվում է տարբեր գործառական ոճերի, խոսույթների շրջանակներում (օրինակ՝ քաղաքական, գովազդային, քարոզչական և այլն), ընդ որում՝ այս կամ այն գործառական ոճում համոզողական նպատակները դրսևորվում են յուրովի:

Գիտական հաղորդակցության շրջանակներում համոզումը առաջնային դերակատարություն ունի, քանի որ գիտական տեքստի հեղինակը որոշակի գաղափարների զարգացման հետ մեկտեղ ձգտում է ընթերցողին ներքաշել համախոհության մեջ և ցանկություն առաջացնել յուրացնելու որոշակի գաղափարներ (Гончарова, 2001: 65):

Կախված ներագրման կոնկրետ շահերից (գաղափարական, քաղաքական, կրոնական և այլն) հնարավոր է խոսել ոչ միայն «համոզողական ոճերի» մասին, այլ նաև խոսույթի համոզողական տեսակի մա-

սին (քաղաքական, քարոզչական, գովազդային և այլն) սակայն, բարդ է առանձնացնել համոզողական տեքստերը (խոսույթները/ոճերը) այնպես, ինչպես կան:

Ըստ Ե. Գոնչարովայի՝ համոզումը, որպես տեքստի գործառական-գործաբանական բնութագրում, կարող է ուսումնասիրվել ինչպես պոտենցիալ գործաբանական իմաստ /առանձին լեզվական միավորների գործառույթ (օրինակ՝ հռետորական միջոցներ), և որպես որոշակի տիպի տեքստերի ընդհանուր գործառական բնութագրում (Гончарова, 2001: 125):

Հարկ է նշել, որ համոզողական լեզվական միջոցները համոզողական նշանակություն չեն պարունակում իրենց իմաստային կառուցվածքում և համոզողական միավորներ չեն հանդիսանում լեզվում և դրանց համոզողական պոտենցիալը իրագործվում է բացառապես տեքստում՝ որպես իմաստային և կառուցվածքային միասնություն:

Քանի որ քաղաքական տեքստերը աչքի են ընկնում համոզողականությամբ, որը դրսևորվում է համոզողական լեզվական միջոցներով տարբեր լեզվական մակարդակներում, հետևաբար՝ համոզումը կարելի է սահմանել որպես բոլոր համոզողական ռազմավարությունների և լեզվական միջոցների միասնություն՝ լեզվի տարբեր մակարդակներում:

Քաղաքական համոզումը իր մեջ ներառում է գնահատողական-հուզական, գովազդային-քարոզչական, ինչպես նաև տրամաբանական և վիճակագրական փաստարկման տարրեր: Քաղաքական խոսույթի համոզողական ներուժը մեծապես կախված է անձի՝ դրական տեսանկյունից ինքնաներկայանալու և ինքնամատուցման մարտավարությունից, ընդդիմախոսի վարկաբեկումից, իրականության մեջ առկա և հայտնի երևույթների մասին բարձրաձայնումից, հասցեագրողի խոստումներից, առաջարկներից, որոնք իրագործվում են կոնկրետ լեզվական միջոցների օգնությամբ՝ փոխաբերություններ, հռետորական հարցեր, եղանակավորող բայեր և այլն (Логинова, 2005: 240-248): Համոզողական հաղորդակցության մեջ նշանակալի և ազդեցիկ դերակատարություն

ունեն այնպիսի գործոններ, ինչպիսիք են հասցեագրողի նկատմամբ անվստահությունը, փաստարկների կարգը համոզողական խոսքային գործողության մեջ, տարբեր տեսակի փաստարկների ընտրությունը, կողմ կամ դեմ փաստարկման գործածությունը, ինչպես նաև սոցիալ - տնտեսական կարգավիճակը, կրթությունը, հուզական վիճակը և քաղաքական հայացքները: Այսպիսով՝ քաղաքական հետազոտություններում համոզումը պետք է սահմանել որպես իմաստային-գործաքանական կարգ, որն իրագործվում է համոզողական հաղորդակցության շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Абельсон Р.П.** (1987), Структуры убеждений. Язык и моделирование социального взаимодействия. М.: Прогресс. С. 317 -380
2. **Виноградов С. В.** (1996), Язык газеты в аспекте культуры речи // Культура русской речи и эффективность общения. М.: Наука, С. 281- 317
3. **Голоднов А.В.** (2011), Персуазивность как универсальная стратегия текстообразования в риторическом метадискурсе (на материале немецкого языка): Автореферат. Дис... докт. филол. наук. СПб. С. 15-16
4. **Голоднов А.В.** (2003), Лингвопрагматические особенности персуазивной коммуникации (на примере современной немецкоязычной рекламы): Автореф. дис... канд. филол. наук: СПб: С. 23
5. **Гончарова Е.А.** (2001), Научная коммуникация- Дискурс- Интер-дискурсивность. Текст и дискурс. СПб. С. 65
6. **Гончарова Е.А** (2001), Персуазивность и способы ее языковой реализации в дискурсе рекламы. Studia Linguistica. Вып.10. СПб. С.125
7. **Дейк Т.А. Ван.** (1989), Язык. Познание. Коммуникация. М.: Прогресс. С. 8-9
8. **Логинова И.Ю.** (2005), Персуазивность как механизм воздействия в политическом дискурсе: Программа политической партии и манифест// Интерпретация. Понимание. Перевод: Сборник научных статей. СПб.: Изд-во СПбГУЭФ. С. 240- 248
9. **Чернявская В.Е.** (2001), Дискурс как объект лингвистических исследований // Текст и дискурс. Проблемы экономического дискурса.- СПб.: Изд-во СПбГУЭФ. С. 11-22

10. **Чудинов А. П.** (2003), Политическая лингвистика (общие проблемы, метафора): Учебное пособие, Екатеринбург: Уральский гуманитарный институт. С. 18
11. **Шелестюк Е.В.** (2014), Речевое воздействие. Онтология и методология исследования. Монография. Москва. Издательство "Флинта" Издательство "Наука". С. 43 -70
12. **Шейгал Е.И.** (2000), Семиотика политического дискурса. Волгоград: Перемена. С. 35

ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԻՍՊԱՆԱԿԱՆ ԹՎԱՅԻՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

ABSTRACT

NEOLOGISMS IN CONTEMPORARY SPANISH DIGITAL PRESS

The present paper studies the role of neologisms in digital press paying special attention to its language. The latter has its distinctive features which make it possible to describe new concepts, new ideologies as well as news regarding different spheres of life thus demonstrating the vocabulary's capacity for adaptation to new situations and the creative spirit of the journalist. The article also examines the ways of broadening the word meaning through neologisms and the creation of neologisms through the change of grammatical category as well as and their use in the press.

Key words: *neologism, Spanish digital press, the language of press, internet, mass media, language change, information, extension of the word meaning.*

РЕЗЮМЕ

НЕОЛОГИЗМЫ В СОВРЕМЕННОЙ ИСПАНСКОЙ ЦИФРОВОЙ ПРЕССЕ

В данной статье рассматривается роль неологизмов в электронной прессе с уделением особого внимания к стилю языка, который в зависимость от цели имеет свои стилистические особенности. Последние позволяют описать новые концепты жизни, новые идеологии, связанные с любыми областями, новости, тем самым выявляя способность лексики адаптироваться к новым ситуациям, творческий дух журналиста. В статье приводятся также методы семантического расширения неологизмов, образование неологизмов путем изменений грамматических категорий а также использование в средствах массовой информации.

Ключевые слова: неологизм, испанская электронная пресса, язык журналистики, интернет, СМИ, изменение языка, информация, семантическое расширение.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում քննության է առնվում նորաբանությունների դերը թվային մամուլում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով վերջինիս լեզվին, որն, ըստ նպատակի գերակայության, ունի իրեն բնորոշ ոճակագմիչ առանձնահատկություններ, որոնց շնորհիվ էլ հնարավորություն է ընձեռում նկարագրել կյանքի նոր հասկացություններ, նոր գաղափարախոսություններ, ցանկացած ասպարեզին առնչվող նորություններ՝ ի ցույց դնելով նոր իրավիճակներին բառապաշարի հարմարման հնարավորությունը և լրագրողի ստեղծագործ ոգին: Հոդվածում ուսումնասիրվում է նաև նորաբանությունների միջոցով բառիմաստի ընդլայնման եղանակները և քերականական կարգի փոփոխման միջոցով նորաբանությունների ստեղծումը և նրանց կիրառումը մամուլում:

Բանալի բառեր՝ նորաբանություն, իսպանական թվային մամուլ, լրագրության լեզու, համացանց, ՋԼՄ, լեզվական փոփոխություն, տեղեկություն, բառիմաստի ընդլայնում:

Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ամեն օր զարգացման նոր հեռանկարներ են առաջանում, ի հայտ են գալիս նորանոր երևույթներ, որոնք էլ իրենց հերթին նոր եզրույթների ստեղծման անհրաժեշտություն են առաջացնում: Այսօր զանգվածային լրատվամիջոցների ոլորտը նույնպես գերծ չէ այս նորամուծություններից: XXI դարում ի հայտ է եկել մի երևույթ, որը վտանգում է նույնիսկ հեռուստատեսության, ռադիոյի և տպագիր մամուլի գոյությունը: Խոսքը վերաբերում է «թվային մամուլ» երևույթին կամ ինչպես այն անվանում են թվային աշխարհում՝ «կիբեր» լրագրությանը, որի զարգացման տարածքը համացանցն է: Թվային աշխարհը բավականին ընդգրկուն է և կարող է փոխարինել մյուս բոլոր լրատվամիջոցներին: Լրատվությունը դառնում է թվային այն պահից ի վեր, երբ ներբեռնվում է համացանց:

Խոսելով մամուլի մասին հարկ է առանձնակի ուշադրություն դարձնել վերջինիս լեզվին, որը Լասարո Կառետերը համարում է հատուկ լեզու՝ համեմատելով այն ընդհանուր լեզվի գրկում գտնվող փոքր կզդու հետ (Domínguez, Font, 1990: 25): Մամուլի կամ լրագրության լեզուն ունի նորմատիվ բնույթ՝ իրեն բնորոշ առանձնահատկություններով և նրա նպատակն է հասկանալի կերպով ընթերցողին հաղորդել տեղեկատվություն:

Յուրաքանչյուր լրագրողի առաջնահերթ խնդիրն է ներկայացնել տվյալ տեղեկությունը՝ անթերի, ճիշտ շարադասությամբ, հարուստ բառապաշարով՝ չհեռանալով իրական դեպքերից և խուսափելով խոսակցական, ինչպես նաև երկխոսառարտություններից: Հարկ է չդիմել անհատական մեկնաբանությունների, այլ փորձել լինել անաչառ և ցուցաբերել չեզոք մոտեցում, ինչպես նաև չչարաշահել հապավումների կիրառությունը:

Քանի որ լրատվամիջոցների հիմնական նպատակն է տեղեկություն հաղորդելը, ընթերցողին ուղղորդելը, հետևաբար կիրառված լեզուն, ըստ նպատակի գերակայության, պետք է ունենա իրեն բնորոշ ոճակագմիչ առանձնահատկությունները:

Այսպես օրինակ՝ տեղեկություն հաղորդելիս նպատակահարմար է օգտագործել պարզ և հստակ լեզու, որպեսզի հասկանալի լինի տարբեր կրթական մակարդակի անհատներին: Այս դեպքում շեշտը դրվում է բովանդակության, այլ ոչ թե ձևի վրա:

Ուղղորդելու համար կիրառվում է գրքային լեզու՝ հագեցած հարուստ ձևակերպումներով, եզրերով, քանի որ լրագրողի նպատակն է հաղորդել այնպիսի գաղափարներ, որոնք մի շարք փաստերի վերլուծության հետևանք են:

Ժամանցային ժանրի լեզուն պետք է լինի ոչ պաշտոնական, որն իր հերթին ենթադրում է խոսակցական տարրերի գերակշռություն:

Իսպանական լրագրության մեջ կարող են կիրառվել գործառական տարբեր ոճեր՝ կախված ժանրից.

1. Գրական ոճ- Երբ հեղինակն օգտագործում է պատկերավոր արտահայտություններ՝ փոխաբերություններ, համեմատություններ, կրկնություններ և այլն՝ իր խոսքն ավելի արտահայտիչ, հարուստ և գեղեցիկ դարձնելու նպատակով: Օր.

"Cocinar, hoy en día se transformó en un acto [...]", dice el escritor y especialista Michael Pollan /<http://www.nexofin.com/notas/417092-siete-reglas-de-oro-a-la-hora-de-comer-n/>.

Hasta ahora, el juego de la política internacional se jugaba de la siguiente manera: los políticos hacían declaraciones públicas, [...] pero eran solo una impostura /<https://elrobotpescador.com/2014/11/02/impresionantes-declaraciones-de-putin-hablandole-claro-a-las-elites-occidentales/>.

2. Վարչական կամ քաղաքական ոճ- Այս դեպքում հեղինակը կիրառում է մեղմասություններ, երկար և ճոխ բառեր, որոնք ավելի հնչեղ են դարձնում միտքը: Օր.

Al parecer en la 'carrera' el ladrón se cayó y fracturó una pierna. El 'amigo de lo ajeno' quedó herido frente a la manzana A del barrio La Cima [...] /<http://www.qhuboibague.com/blog/ladron-huyo-y-se-fracturo/>.

Durante 2012, autoridades penitenciarias perdieron o cedieron parte del control de cinco cárceles a los internos Centro de Readaptación Social de Ciudad del Carmen, Campeche; Penitenciaría de Santa Martha Acatitla, DF; [...] /<http://www.animalpolitico.com/2013/11/estados-ceden-internos-el-control-de-5-carceles-en-un-ano/>.

El perdón a quienes han cometido aborto, anunciado ayer por el papa Francisco no es vinculante en materia civil, según organismos de derechos humanos, mientras un grupo impulsa una iniciativa de ley para interrumpir el embarazo /<http://www.elnuevodiario.com.ni/nacionales/369279-perdon-abortos-no-une-posiciones/>.

Es lógico que una nueva etapa vital conlleve unos cambios de comportamiento en los ancianos, se trata de la adaptación a la vejez. [...] La tercera edad no es ninguna excepción, eso sí, posiblemente será la adaptación

más complicada /<http://www.elrincondelcuidador.es/blog/cambios-de-comportamiento-en-ancianos-con-demencia-como-reaccionar/>.

3. Ոչ պաշտոնական կամ խոսակցական ոճ: Այս ոճն իր մեջ համատեղում է լեզվի հաղորդակցման և ներգործման գործառույթները և այս առումով մոտենում գեղարվեստական ոճին: Նշված երկուղղվածությամբ էլ պայմանավորված են խոսակցական ոճի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են արտահայտչականությունն ու հուզականությունը, տեսանելիությունն ու պատկերավորությունը, հոմանիշային բազմազանությունն ու հարստությունը, պատկերավորման և արտահայտչական միջոցների հաճախակի գործածությունը, ժողովրդի կողմից ստեղծված արտահայտությունները, որոնք, լինելով խոսակցական, այնուամենայնիվ, գրական խոսքում կիրառելի են (Եզեկյան, 1999: 65): Օր.՝ dar mucha “papaya” en el banco- ‘robar una fuerte cantidad de dinero dentro de un banco’;

Recuerde que el mejor antídoto contra los hampones es “no dar papaya”. Por mucha policía que haya en las calles, el principal responsable de su seguridad es usted /<http://www.elespectador.com/noticias/bogota/evitar-le-roben-primera-articulo-497975/>.

Մամուլն այն ոլորտն է, որտեղ լեզվական փոփոխություններ տեղի են ունենում յուրաքանչյուր օր: Ստեղծվում են նոր բառեր՝ բնութագրելու նոր երևույթները կամ պարզապես փոխարինելու հներին, կամ կիրառությունից դուրս եկած բառերը նորովի են մատուցվում հանրության դատին:

Եթե նախկինում լեզվի մեջ տեղի ունեցող փոփոխությունները դիտվում էին որպես լեզվի աղավաղում, ապա հիմա դրանք համարվում են կենդանի լեզվին հատուկ երևույթներ: Հարկ է նշել նաև, որ լեզվի նորացումը դրական գնահատվելուն զուգահեռ, մի շարք խնդիրներ է առաջացնում հասարակության լայն խավերի շրջանակում՝ հարմարվելու և յուրացնելու տեսանկյունից: Այս մշտապես և արագ տեղի ունեցող փոփոխությունները պայմանավորված են գիտության և տեխնիկայի ոլորտի շարունակական առաջխաղացմամբ ու զարգացմամբ, ինչպես

նաև հասարակական լրատվամիջոցների ազդեցությամբ, որոնց շնորհիվ էլ լայն կիրառություն ու տարածում են գտնում նորաբանությունները:

Մանուել Ալվարը, ի թիվս մի շարք գիտնականների, որոնք անդրադարձել են մամուլի լեզվում ի հայտ եկող նորաբանությունների ուսումնասիրմանը, առանձնացնում է բառիմաստի ընդլայնման երկու եղանակ՝ փոխաբերություն և իմաստային տեղաշարժ: Որպես մեծ կարևորություն ունեցող երևույթ վերոնշյալ երկու եղանակներին կարելի է հավելել իմաստային պատճենումը:

1. Փոխաբերությունը, ըստ արդի հայերենի բացատրական բառարանի, բառերի կամ դարձվածների գործածությունն է այլաբանական առումով՝ նմանության, համեմատության, հարաբերակցության կամ առնչականության հիման վրա (Աղայան, 1976: 15-24): Օր.՝ pinza ինչպես ‘acuerdo entre dos partidos, a la derecha e izquierda de un tercero, para presionarlo’; pelotazo ինչպես ‘enriquecimiento rápido y no totalmente limpio’.

[...] *El expresidente del Gobierno Felipe González ha sido el primero en poner el término sobre la mesa y asegurar que Pedro Sánchez, como él en el 96, está siendo objeto de aquella célebre **pinza** entre la derecha y el que parece será el principal partido de la izquierda, [...]* /<http://ecodiario.economista.es/elecciones-2015-20D/noticias/7206781/12/15/Hay-pinza-entre-Rajoy-e-Iglesias-Nuestro-enemigo-es-el-PSOE-nuestro-rival-Ciudadanos.html/>.

[...] *Yo creo que el aprovechamiento de tecnologías emergentes es clave para la prosperidad y el bienestar. Lo que si quiero es alejar esos conceptos de la avaricia, el **pelotazo** y el rápido enriquecimiento.* [...] /<https://glissoire.wordpress.com/2012/10/21/innovacion-superlativa/>.

Փոխաբերականությունը ունի երկու տարբերակ՝

ա) Լեզվում արդեն առկա եզրույթը իր հիմնական իմաստի փոխառն հատուկ ոճում հանդես է գալիս մեկ այլ իմաստով: Նմանատիպ երևույթի օրինակ է իսպաներենի sensibilidades (դյուրագգացություն) բա-

որ, որը ստացել է հատուկ իմաստ քաղաքական լեզվում: Հետևյալ օրինակում տվյալ բառը օգտագործվում է «տարաձայնություն, անհամաձայնություն» իմաստով:

*De hecho, consideran sospechoso que se haya abierto un debate sobre las diferentes **sensibilidades** que hay en la dirección del partido en un momento en el que el PSOE ha decidido renunciar, por el momento, a llegar a un acuerdo con Podemos y las fuerzas de izquierdas para formar un gobierno de progreso, sin Ciudadanos* /<http://www.europapress.es/nacional/noticia-podemos-cierra-filas-niega-divisiones-estrategia-negociaciones-psoe-20160309182649.html/>.

բ) Նոր եզրույթ կարելի է ստանալ՝ պատճենելով մեկ այլ լեզվում առաջացած փոխաբերությունը, ինչպես օրինակ՝ doméstico (անգլերենում՝ domestic), especulación (անգլերենում՝ speculation- ենթադրություն, կասկած) և այլն:

*Las **especulaciones** sobre el hipotético papel que habrían jugado los estupefacientes en su deceso no han dejado de intensificarse desde que el conocido publicista Gary Farrow, [...], dejara entrever este lunes que el "fácil acceso" que tenía George a determinadas sustancias estaría directamente vinculado al fallo cardíaco [...]* /<http://www.elmundo.es/loc/2016/12/27/58626ab7e5fdea1a5c8b45b3.html/>.

2. Իմաստային տեղաշարժը ենթադրում է բառի նոր իմաստի ստեղծում, որը բխում է տվյալ բառի արտահայտած նախնական իմաստից: Սա առաջացնում է լուրջ խնդիրներ, քանզի շատ հաճախ դժվարություն է առաջանում տարբերակել իրական իմաստային տեղաշարժը բառային անճշտությունից: Վերջինիս արդյունքում առաջացել են մի շարք նոր իմաստներ, որոնք ամրագրված են DRAE- ում: Օր.՝ incidir բայը՝ ‘insistir’ իմաստով, puntualizar բայը՝ ‘aclarar, precisar, insistir’ իմաստներով:

*Palacios Boix explica que la mortalidad tras el contagio "oscila entre el 53% y el 90%, según lo debilitado o desnutrido que se encuentre el paciente", y **puntualiza** que quienes sobreviven a la infección las primeras dos semanas*

"tienen de suyo un mejor pronóstico" /<http://www.europapress.es/murcia/noticia-colaborador-hospital-mesa-castillo-advierte-facilidad-ebola-puede-acceder-cualquier-pais-20140808133634.html/>.

*[...] En esta situación y con el objetivo de maximizar sus apoyos, la estrategia de los partidos de gobierno debería gravitar en torno a cuatro ejes. Primero, **incidir** en que los indicadores económicos de Galicia son mejores que los del conjunto de España y que, en perspectiva histórica, este diferencial es una novedad /http://elpais.com/diario/2009/02/16/galicia/1234783090_850215.amp.html/.*

3. Իմաստային պատճենումը բառի նոր իմաստ ձեռք բերելու գործընթացն է: Այն ծագում է մեկ այլ լեզվում առկա համարժեք բառից (այս երևույթը նկատվում է հատկապես վատ թարգմանությունների դեպքում): Օր.՝ *abrumador* բառը՝ *‘aplastante’* իմաստով; *agresivo*-ն՝ *‘audaz, emprendedor’* իմաստներովն այլն (Salazar, Cabezas, 2002:117-118):

*El PP ha vuelto a ganar las elecciones en Tordesillas (Valladolid), por **abrumadora** mayoría en un municipio que gobierna el PSOE, a pesar de que la Junta de Castilla y León, presidida por el ‘popular’ Juan Vicente Herrera (PP), prohibiera la muerte en público del Toro de la Vega /<http://www.vozpopuli.com,26.06.2016/>.*

*Todos esos avances, dijo Ferreri, deberán ir acompañada de una política de inserción internacional “pragmática y **agresiva** donde el país pueda avanzar, defendiendo sus valores, pero hacia abrir la mayor cantidad de mercados” /<http://www.elpais.com.uy/economia/noticias/pablo-ferreri-apunto-confianza-audacia.html/>.*

Ըստ Գլորիա Գեոերո Ռամոսի՝ իմաստային նորաբանության ստեղծման համակարգերից մեկը բառերի քերականական կարգի փոփոխումն է: Կարող են նկատվել փոփոխման տարբեր տիպեր.

ա) նախդրավոր շարույթի վերափոխումը ածականի, օր.՝ *de aumento de salario-salarial, casa de padre- paterna, cama de madera-maderosa, personas sin vergüenza- sinvergüenzas:*

*El rector de la Universidad reclamó un 20% de **aumento salarial** para docentes y funcionarios y fondos para invertir en servicios de Montevideo* /<http://www.elpais.com.uy/informacion/universidad-republica-pretende-aumento-salarial.html/>.

բ) գոյականի ածականացում (սովորաբար գոյական+գոյական կառույցներում, որտեղ երկրորդ գոյականական բաղադրիչը կատարում է ածականի դեր), օր.՝ *coche cama, mueble bar, partido bisagra*:

*Partiendo de cero ha conseguido nueve escaños, arañando votos a derecha e izquierda; se ha convertido en un **partido bisagra** de centro-centro y tiene la llave de la estabilidad en esa región* /http://elpais.com/elpais/2015/03/27/opinion/1427485575_641361.html/.

գ) ածականի մակբայացում, օր.՝ *hablar claro, jugar sucio, pasarlo fatal, caminar rápido, correr lento, atar fuerte, hablar bajo, etc.*

[...] *Hacer contactos para trabajar no es **jugar sucio***. [...] http://economia.elpais.com/economia/2016/09/28/actualidad/1475057329_738767.html/. ***Caminar rápido** es la opción ideal para aquellas personas que “quieren hacer deporte de forma moderada pero no tienen un estado físico óptimo* [...] /http://elpais.com/elpais/2014/09/17/buenavida/1410948875_792545.html/

դ) գոյականի մակբայացում, օր.՝ *pasarlo bomba, sentirlo horrores, trabajar cantidad, pesar tela*:

*Y finalmente la CSCE, [...], es un organismo tan inoperante que sólo su convocatoria es un insulto a la inteligencia. Conclusión: lo vamos a **pasar bomba*** /http://elpais.com/diario/1994/12/08/internacional/786841219_850215.html/.

ե) ածականի գոյականացում: Այս երևույթը հիմնականում հանդիպում է գոյական +ածական կառույցներում, որտեղ գոյականը զեղչված է: Օր.՝ Երբ *poder ejecutivo* (*գործադիր իշխանություն*) բառակապակցության մեջ զեղչվում է *poder* (*իշխանություն*) բառը, *ejecutivo* (*գործադիր*) ածականը դառնում է գոյական (Salazar, Cabezas, 2002:119):

*Antes de la votación, el actual coordinador de IU de Asturias, Jesús Iglesias, favorable a la entrada en el Gobierno pidió públicamente a los militantes apoyo al acuerdo para dotar de estabilidad las políticas del **ejecutivo asturiano*** /<http://www.elperiodicomediterraneo.com/>.

Նորաբանություններով մասնավորապես հարուստ են սպորտային և մշակութային ոլորտները: Այս երևույթը Խ.Պասկուալը դիտարկում է հետևյալ կերպ. իր միտքն արտահայտելու համար մարդ ստեղծում է նոր բառեր՝ միննույն ժամանակ տվյալ բառին հաղորդելով իմաստային այլ նրբերանգներ /http://cvc.cervantes.es/ensenanza/biblioteca_ele/asele/pdf/14/14_0089.pdf/:

Մամուլում հայտնված նորաբանությունները, սակայն, կարող են վերաբերել տարբեր ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սպորտի, առողջապահական, ինֆորմատիկայի և այլն.

Քաղաքական- apellidismo (կաշառակերություն), necionalismo (որոշ ինքնավար մարզերում տիրող հատուկ իրավիճակ), filoetarra (ահաբեկչություն), yuppismo (բարձրագույն կրթությամբ և տնտեսական արտոնյալ դիրք ունեցող երիտասարդների պահվածք): Մի շարք քաղաքական գործիչներ ևս իրենց ներդրումն ունեն նորաբանությունների ստեղծման գործընթացում: Օրինակ՝ zapaterismo, rajoyano, zapatismo և այլն:

Տնտեսական – bancarización (բանկային ծառայություններից բնակչության հաճախակի օգտվելը), descarbonizar (ածխից կախում չունենալ), consumo oculto (էլեկտրաէներգիայի սպառում այնպիսի սարքավորումներից, որոնք անջատված են)

Սպորտային - yogailates (մկանների և առաձգականություն և ուժ հաղորդող վարժություններ), todocampista (բազմաֆունկցիոնալ խաղացող), recontra (հակահարվածի ժամանակ արված վիրավորական արձագանք), futbito (ֆուտբոլային խաղի տեսակ, յուրաքանչյուր խմբում հնգական խաղացող, որտեղ դաշտի և դարպասի չափսերը նման են ձեռքի գնդակի չափսերին), zlatanear (ուժով տիրել՝ ստեղծված հայտնի ֆուտբոլիստ Զլատան Իբրահիմովիչի պատվին), inmessionante (ինքնակատարելագործման անսահմանափակ ընդունակություն և կա-

տարյալ խաղառճ՝ նվիրված արգենտինացի ֆուտբոլիստ Մեսիին): 2010թ. Աշխարհի առաջնությունում Իսպանիայի ֆուտբոլի հավաքականի հաղթանակը սպորտային լրագրողներին ներշնչեց ստեղծել նոր եզրույթ, որը կսահմաներ ֆուտբոլ խաղալու նոր ոճը՝ *tiqui-taca* և այն խաղացողը, որը ցուցադրում էր այս ունակությունը՝ *tiquitaquero*.

Առողջապահական – Այս ասպարեզում հայտնում են բուժման, թերապիաների նոր տեսակներ, որոնք ենթադրում են նոր բառերի առկայություն՝ *abrazoterapia* (գրկախառնվելու թերապիա՝ արդյունավետ կերպով հաղթահարելու ընկճախտն ու մենությունը), *chocolaterapia* (մաշկի բարելավման նպատակով շոկոլադային դիմակով կատարվող թերապիա), *vinoterapia* (զինեբուժություն), *abdominoplastia* (որովայնի ճարպային հատվածների հեռացում՝ վիրահատական միջամտությամբ):

Ինֆորմատիկա – **Editiovultafobia** (Facebook-ի օգտատերերի հիվանդություն, երբ չեն ցանկանում կրկին հանդիպել և վիրտուալ շփվել իրենց համադասարանցիների կամ նախկին ծանոթների հետ), *geolocalización* (հեռախոսի GPS սարքավորման միջոցով մարդու գտնվելու վայրը որոշելը), *infoxicación* (թվային աշխարհի հետ գործ ունեցող անհատի տեղեկությամբ գերծանրաբեռնվելը), *postureo* (սոցցանցերում օգտատերերի տարբեր դիրքերով արված նկարների գերակայությունը), *ciberespacio* (կիբերտարածություն՝ պայմանական միջավայր, որտեղ տեղի է ունենում տվյալների փոխանակություն համակարգչային ցանցերի միջոցով), *interfaz* (մարդու հաղորդակցումը սարքավորման հետ), *cliqear* (համակարգչի ստեղնաշարի որևէ կոճակ սեղմելու գործընթաց), *emoticones* (եմոցիաներ արտահայտող գրաֆիկական պատկեր):

Ազիրե Մարտինեսը տարբերակում է մամուլում նորաբանությունների ստեղծման երկու տեսակ՝ իմաստաբանական և գործաբանական: Ըստ Ազիրեի՝ երբեմն լինում են այնպիսի իրավիճակներ, երբ իմաստաբանական անհրաժեշտությունը ստիպում է նոր եզրույթ փնտրել: Այս երևույթը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ունենք նշանակիչ, որը գուրկ է նշանակյալից: Այսինքն՝ գաղափարը, գործողությունը, առար-

կան կամ իրավիճակը նոր են ի հայտ եկել, և անհրաժեշտություն է առաջանում ստեղծել նոր եզրույթ, որը մեզ կծառայի այդ նոր երևույթի նկարագրության համար:

Գործաբանական հիմնավորման դեպքում լրագրողը անհրաժեշտություն է ունենում ստեղծելու մի բառ, որը որոշակի նոր երանգ է հաղորդում արդեն գոյություն ունեցող բառիմաստին: Այդ երանգը կարող է լինել ծաղրական, մեղմացուցիչ, կոմիկական և այլն /http://www.razony-palabra.org.mx/N/N89/V89/04_Yanez_V89.pdf/:

Եվ այսպես՝ պատմական զարգացման ընթացքում անհրաժեշտություն է առաջանում ստեղծելու նոր եզրույթներ, նոր բառեր, որոնք մարդկանց հնարավորություն են ընձեռում նկարագրել նոր երևույթները: Այս երևույթի զարգացման գործում իր առանձնահատուկ դերն ունի մամուլի աշխարհը, լինի այն թվային, թե տպագիր: Մամուլը, բացի յուրաքանչյուր ոլորտին վերաբերող նյութերի տարածող աղբյուր լինելուց, իր լեզվական առանձնահատկությունների շնորհիվ հնարավորություն է ընձեռում նկարագրել իրերի արդի վիճակը, կյանքի նոր հասկացություններ, նոր գաղափարախոսություններ, ցանկացած ասպարեզին առնչվող նորություններ՝ ի ցույց դնելով նոր իրավիճակներին բառապաշարի հարմարման հնարավորությունը և լրագրողի ստեղծագործ ոգին: Շատ հաճախ լրագրողների՝ նորաբանություններին դիմելու առաջնային նպատակն է իրենց ստեղծած բառերի արտահայտչականությամբ ընթերցողի վրա ազդեցություն թողնելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Aguirre, C.** (2013), <<Los neologismos en la prensa y en la jerga juvenil: semejanzas y diferencias>>, Antonio Ubach Medina (ed.), Madrid.
2. **García Domínguez, P., Gómez Font, A.** (1990), El idioma español en las agencias de prensa, Fundación Germán Sánchez Ruipérez, Madrid, p.25.
3. **Guerrero Salazar, S., Núñez Cabezas, E.** (2002), Medios de comunicación y español actual, Aljibe, Málaga, pp.117-119.

4. **Pascual José, A.**, El placer y el riesgo de elegir. Sobre los recursos derivativos del español, lección inaugural del curso 1996/1997, Universidad de Salamanca.
5. **Աղայան, Է. Բ.** (1976), Արդի հայերենի բացատրական բառարան, Հայաստան հրատ. Երևան, էջ 1524.
6. **Եզեկյան, Լ. Կ.** (1999), Հայերենի գործառական ոճերը, Երևանի համալսարանի հրատ., էջ 65.
7. **Նազարյան, Ա. Հ.** (1993), Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան. Երևան, Ապոլոն հրատ.:
8. http://cvc.cervantes.es/ensenanza/biblioteca_ele/asele/pdf/14/14_0089.pdf
9. http://www.razonypalabra.org.mx/N/N89/V89/04_Yanez_V89.pdf
10. <http://www.nexofin.com/notas/417092-siete-reglas-de-oro-a-la-hora-de-comer-n/>
11. <https://elrobotpescador.com/2014/11/02/impresionantes-declaraciones-de-putin-hablandole-claro-a-las-elites-occidentales/>
12. <http://www.qhuboibague.com/blog/ladron-huyo-y-se-fracturo/>
13. <http://www.animalpolitico.com/2013/11/estados-ceden-internos-el-control-de-5-carceles-en-un-ano/>
14. <http://www.elnuevodiario.com.ni/nacionales/369279-perdon-abortos-no-une-posiciones/>
15. <http://www.elrincondelcuidador.es/blog/cambios-de-comportamiento-en-ancianos-con-demencia-como-reaccionar/>
16. <http://www.elespectador.com/noticias/bogota/evitar-le-roben-prima-articulo-497975>
17. <http://ecodiario.economista.es/elecciones-2015-20D/noticias/7206781/12/15/Hay-pinza-entre-Rajoy-e-Iglesias-Nuestro-enemigo-es-el-PSOE-nuestro-rival-Ciudadanos.html>
18. <https://glissoire.wordpress.com/2012/10/21/innovacion-superlativa/>
19. <http://www.europapress.es/nacional/noticia-podemos-cierra-filas-niega-divisiones-estrategia-negociaciones-psoe-20160309182649.html>
20. <http://www.elmundo.es/loc/2016/12/27/58626ab7e5fdea1a5c8b45b3.html>
21. <http://www.europapress.es/murcia/noticia-colaborador-hospital-mesa-castillo-advierte-facilidad-ebola-puede-acceder-cualquier-pais-20140808133634.html>
22. http://elpais.com/diario/2009/02/16/galicia/1234783090_850215.amp.html
23. <http://www.vozpopuli.com,26.06.2016>
24. <http://www.elpais.com.uy/economia/noticias/pablo-ferreri-apunto-confianza-audacia.html>
25. <http://www.elpais.com.uy/informacion/universidad-republica-pretende-aumento-salarial.html>

26. http://elpais.com/elpais/2015/03/27/opinion/1427485575_641361.html
27. http://economia.elpais.com/economia/2016/09/28/actualidad/1475057329_738767.html
28. http://elpais.com/elpais/2014/09/17/buenavida/1410948875_792545.html
29. http://elpais.com/diario/1994/12/08/internacional/786841219_850215.html
30. <http://www.elperiodicomediterraneo.com>

ՏԵՔՍՏԻ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

ABSTRACT

FACTORS UNDERLYING TEXT COMPRESSION IN SCIENTIFIC DISCOURSE

The language economy principle, which is realized in actual communication through text compression, regulates the process of linguistic interaction. To evaluate the text-organizing function of the economy principle realization in discourse, it is important to elaborate on the correlation of economy and redundancy in speech, identify the stage at which text compression occurs, as well as reveal the mechanisms responsible for identifying and decoding compressed constructions. Hence, our focus is on the study of some key linguistic and extralinguistic factors underlying the peculiarities of the economy principle realization in the form of text compression. Namely, the given article is an attempt to investigate the pragmatic factors guiding the process of text compression in scientific discourse.

Key words: *language economy, compression, informativity, scientific discourse, pragmatic universe of discourse, academic discourse, presupposition.*

РЕЗЮМЕ

ФАКТОРЫ, ОБУСЛОВЛИВАЮЩИЕ КОМПРЕССИЮ ТЕКСТА В НАУЧНОМ ДИСКУРСЕ

Принцип языковой экономии, который реализуется в речи посредством компрессии текста, регулирует весь процесс языкового взаимодействия. Определение текстообразующей функции компрессии как способа реализации принципа языковой экономии в дискурсе подразумевает выяснение соотношения языковой экономии и речевой избыточности, определения того, на каком этапе происходит компрессия текста, а также выявления механизмов восприятия сжатых конструкций. Таким образом, основной целью данной работы является выявление некоторых ключевых лингвистических и экстралингвистических факторов, лежащих в основе особенностей реализации принципа экономии в речевом взаимодействии. В частности, в

настоящей статье предпринимается попытка исследовать прагматические факторы, определяющие процесс сжатия текста в научном дискурсе.

Ключевые слова: языковая экономия, компрессия, информативность, научный дискурс, прагматический универсум дискурса, академический дискурс, пресуппозиция.

ԱՄՓՈՓՈՒՄ

Խոսքում տեքստի խտացման միջոցով իրացվող լեզվական տնտեսման սկզբունքը բնորոշում և կարգավորում է մարդկային հաղորդակցության ողջ գործընթացը: Հարցն այն է, թե ինչպես է որոշվում տնտեսում-ավելորդաբանություն հարաբերակցությունը տվյալ խոսքային իրադրությունում, խոսքաստեղծման որ փուլում է տեղի ունենում տեքստի խտացումը, ինչպես են խտացված կառույցները վերծանվում խոսքի հասցեատիրոջ կողմից և այլն: Այլ կերպ՝ գործ ունենք խտացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման գործընթացի վրա ազդող լեզվական և արտալեզվական գործոնների քննության հետ: Մասնավորապես՝ սույն աշխատանքում փորձ է արվել քննելու գիտական խոսքում լեզվական կառույցների խտացումը պայմանավորող գործաբանական գործոնները:

Բանալի բառեր՝ լեզվական տնտեսում, խտացում, տեղեկատվայնություն, գիտական դիսկուրս, դիսկուրսի գործաբանական համընդհանրույթ, ակադեմիական դիսկուրս, կանխենթադրույթ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տեքստաստեղծման գլխավոր նպատակը տեղեկատվության հաղորդումն է: Ցանկացած տեքստ տեղեկատվության կրող է: Սակայն ինչպես «խտացում», այնպես էլ «տեղեկատվություն» տերմինի սահմանումը միանշանակ չէ: Ի.Ռ. Գալպերինը նշում է, որ «տեղեկատվություն» տերմինն օգտագործվում է երկու իմաստով՝ ընդհանուր (առօրյա/կենցաղային) և տերմինաբանական: Առաջին իմաստով տեղեկատվություն ասելով՝ նկատի ունենք ցանկացած հաղորդում՝ ձևակերպված որպես անվանողական բնույթի բառակապակցություն, փաստեր հաղորդող նախադասություն, նախադասությունների ամբողջություն (վերասույ-

թային միասնություն և պարբերություն) կամ ամբողջական տեքստ: Այս մեկնաբանմամբ տեղեկատվությունը սովորաբար նույնացվում է անվանման, իմաստի, բովանդակության հետ: Երկրորդ նշանակությամբ «տեղեկատվություն» տերմինը ենթադրում է միայն օբյեկտիվ իրականության իրերի, երևույթների, հարաբերությունների և իրադարձությունների մասին նոր տեղեկությունների հաղորդում (Гальперин, 2004: 26): Լ.Գ. Լուզինան, խոսելով տեքստում տեղեկատվության բաշխման ճանաչողական և գործաբանական հայեցակերպերի մասին, ներկայացնում է «տեղեկատվություն» տերմինի երեք մեկնաբանություն: Առաջին դեպքում նա տեղեկատվությունը նույնացնում է լեզվական միավորների իմաստի և բովանդակության հետ: Երկրորդ դեպքում նա, ներկայացնելով «տեղեկատվություն» տերմինի՝ ճանաչողական լեզվաբանության մեջ ընդունված մեկնաբանությունը, այն սահմանում է որպես հաղորդակցության ընթացքում լեզվական միջոցներով ներկայացվող և փոխանցվող գիտելիք: «Տեղեկատվություն» տերմինի՝ Լ.Գ. Լուզինայի առաջարկած երրորդ սահմանումը համապատասխանում է Ի.Ռ. Գալպերինի կողմից ներկայացվող նեղ տերմինաբանական սահմանմանը (Лузина, 1996: 22): Տեքստում ամփոփված տեղեկատվության ընդհանուր ծավալը ընդհանուր առմամբ սահմանվում է որպես տեքստի տեղեկատվական հագեցվածություն կամ տեքստի տեղեկատվայնություն: Այսպես՝ Տ.Վ. Ժերեբիլոյի «Լեզվաբանական տերմինների բառարանում» տեղեկատվայնությունը (информативность) սահմանվում է որպես տեղեկատվության խտություն, հագեցվածություն բովանդակությամբ կամ միավոր ժամանակում փոխանցվող տեղեկությունների և գիտելիքների քանակ (Жеребило, 2005: 89): Սակայն, հետևելով Ի.Ռ. Գալպերինի կողմից առաջարկված՝ տեղեկատվության նեղ տերմինաբանական սահմանմանը, պետք է նշենք, որ հաղորդակցության տեսանկյունից առավել արժեքավոր է նոր տեղեկատվությունը, և հենց վերջինով է պայմանավորված տեքստի տեղեկատվայնությունը: Այլ կերպ ասած՝ **հակված ենք տեղեկատվայնություն հասկացությունը դիտարկել ոչ թե պարզապես որպես տեքստում պարունակվող ամեն տեսակի**

տեղեկությունների ամբողջություն և դրանով իսկ տեքստի որակի բացարձակ ցուցիչ, այլ հարաբերական կարգ, քանի որ հաղորդակցության գործընթացում հաղորդվող տեղեկատվության մեջ նոր բաղադրիչը կամ տեղեկատվայնության աստիճանը «չի կարող դիտարկվել հասարակական, հոգեբանական, գիտատեսական, հանրամշակութային, տարիքային, ժամանակային և այլ գործոններից դուրս: Մի հասցեատիրոջ համար հաղորդումը կարող է լինել նոր և այդ իսկ պատճառով նոր տեղեկատվություն պարունակել, մինչդեռ մեկ ուրիշի համար նույն հաղորդումը կարող է զուրկ լինել որևէ տեղեկատվությունից (մեր կողմից ընդունված տերմինաբանությամբ՝ տեղեկատվայնությունից), քանի որ հաղորդման բովանդակությունը նրա համար արդեն հայտնի է կամ ընդհանրապես անհասկանալի: Այն, ինչ որոշակի ժամանակահատվածի համար նոր էր, հաջորդ պահի դրությամբ արդեն հայտնի է» (Гальперин, 2004: 27): Այստեղ է, որ առաջ է գալիս «հասցեագրող-տեքստ-հասցեատեր» բաղադրիչների եռամիասնության՝ որպես տեղեկատվայնության կարգի ձևավորման մեջ կարևոր դեր կատարող գործոնի հարցը: Տեքստաստեղծման տեսանկյունից հաղորդակցական ակտի կենտրոնական բաղադրիչը հասցեագրողն է, քանի որ հենց նա է կատարում տեղեկատվության հաղորդման նպատակով լեզվական միջոցների ընտրության և խոսքայնացման գործը: Խոսքն իր բոլոր բովանդակային և գործաբանական հատկանիշներով անմիջականորեն պայմանավորված է հասցեագրողի ընտրությամբ, որը նա անում է գիտակցաբար կամ ենթագիտակցաբար: Հասցեագրողը կատարում է լեզվական միջոցների ընտրություն որոշակի հաղորդակցական իրավիճակում՝ կոնկրետ խոսքային գործունեության առանձնահատկություններին համապատասխան: Տեղեկատվությունը չի կարող փոխանցվել ճիշտ այն տեսքով, որով այն առաջ է գալիս, այլ պետք է ձևափոխվի, ենթարկվի յուրատեսակ խտացման, որպեսզի հաղորդվի և համարժեքորեն ընկալվի: Ի.Ռ. Գալպերինն իր հերթին նշում է, որ «ցանկացած հաղորդակցության մեջ զգալի դեր է կատարում ձևը, որում ամփոփված է տեղեկատվությունը» (Гальперин, 2004: 30): Ակնհայտ է, որ խոս-

քաստեղծման գործընթացում՝ փոխանցվելիք տեղեկատվության համար համապատասխան խոսքային արտահայտման ձև ընտրելիս, հասցեագրողն առաջնորդվում է որոշակի սկզբունքներով, որոնք էլ հենց պայմանավորում են միևնույն տեղեկատվության հաղորդմանն ուղղված տարբեր մակերեսային շարահյուսական կառույցների գոյության հնարավորությունը: Այս սկզբունքների բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում: Մասնավորապես՝ տեղեկատվության կամ տեքստի բովանդակության արտահայտման համար այս կամ այն շարահյուսական կառուցվածքի ընտրությունը, որն իր հերթին անմիջականորեն կապված է խտացման՝ որպես տնտեսման սկզբունքի իրացման հետ, պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են տեքստում տեղեկատվության բաշխումը (թեմատեմատիկ կազմակերպումը կամ կանխենթադրույթի և նախադրույթի հարաբերակցությունը), հասցեագրողի խոսքային մտադրությունը (խոսողական ակտերի տեսակն ու հերթագայությունը), տեքստի գործաբանական ուղղվածությունը, հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, հաղորդակցական միջավայրը և այլն:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՏԱՅՄԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ինչպես հայտնի է, խոսքային վարքագծի կարևորագույն պայմաններից է հաղորդել այնպիսի տեղեկատվություն, որը կնպաստի հաջորդի համարժեք ընկալմանն ու մեկնաբանմանը: Հետևաբար ասույթների հաջորդական շղթայում առաջնային կարևորություն է ստանում հին կամ հայտնի և նոր տեղեկատվության տարանջատումը: Ընդ որում, լեզվական միջոցների տնտեսման տեսանկյունից կարևոր է այն, որ հին կամ հայտնի տեղեկատվությունը, որպես կանոն, լեզվական միջոցներով ուղղակիորեն չի արտահայտվում, այլ հաղորդվում է որպես կանխենթադրույթ: Այսինքն՝ ասույթի թեման հանդես է գալիս որպես գործաբանական կանխենթադրույթի տարր: Հենց այստեղ է, որ առաջ է

գալիս դիսկուրսի գործաբանական համընդհանրությո՞ւթ (pragmatic universe of discourse) հասկացությունը, որը ենթադրում է այն կանխենթադրությո՞ւթների ամբողջությունը, որոնք ընդհանուր են խոսակիցների համար, և որոնք վերջիններս համարում են իրենց համատեղ գիտելիքը (Kempson, 1975): **Ասույթի տեղեկատվայնությունը, հետևաբար և հաղորդակցության արդյունավետությունը որոշվում են ասույթի այն մասով, որը չի մտնում դիսկուրսի գործաբանական համընդհանրությո՞ւթի մեջ:** Հետևաբար համապատասխան խոսքային ձևակերպում ընտրելիս հարկավոր է հաշվի առնել նշված հանգամանքը:

Ինչպես հայտնի է, հաղորդակցության գործընթացը խոսողական ակտերի շարան է, այսինքն՝ խոսողի նպատակը ոչ միայն պարզապես տեղեկատվության հաղորդումն է, այլև խոսքի միջոցով որոշակի գործողություններ իրականացնելը, ինչպես օրինակ՝ ազդել տեքստի կամ խոսքի հասցեատիրոջ հետագա գործողությունների ընթացքի վրա, փոխել վերջինիս տեղեկացվածության աստիճանը և այլն (իլլուկուտիվ/պերլուկուտիվ ակտեր): Խոսքը հաղորդակցական մտադրության մասին է: Ընդ որում՝ հաղորդակցական ակտը նախագծելիս խոսողը պետք է բավարար պատկերացում ունենա ոչ միայն այն մասին, թե որքանով է խոսակիցը ընկալում խոսողի մտադրությունը, այլև թե խոսակիցն ինչ նպատակ է հետապնդում՝ դառնալով հաղորդակցական ակտի մասնակիցը (Austin, 1962; Searle, 1969): Սա որոշիչ դեր է խաղում հաղորդակցական ակտի ժամանակ խոսողի կողմից սեփական մտադրությունն իրագործելու նպատակով համապատասխան լեզվական միջոցների ընտրության հարցում:

Ինչ վերաբերում է տեքստի գործաբանական ուղղվածությանը, ապա այն մեծապես պայմանավորված է տեքստի տեսակով: Այսինքն, ըստ ժանրային պատկանելության, յուրաքանչյուր տեքստ ենթադրում է համապատասխան հասցեատեր, հետևաբար և վերջինիս ընկալման առանձնահատկություններին համապատասխան՝ լեզվական միջոցների ընտրություն որոշակի ծավալի և բարդության տեղեկատվության խոսքային ձևակերպման համար:

Համապատասխան ծավալով տեղեկատվություն հաղորդելու նպատակով լեզվական միջոցների ընտրության հարցում կարևորվում է նաև խոսակիցների փոխհարաբերությունը: Հաղորդակցությունը խառնվում է այն փաստի վրա, որ ցանկացած անհատ սոցիալական էակ է, ով որոշակի հարաբերության մեջ է գտնվում ուրիշ անհատների հետ: Այս կապն արտացոլվում է իրականացվող յուրաքանչյուր հաղորդակցական ակտի մեջ: Հաղորդակցական իրավիճակը ինքնաբերաբար ստեղծում է կոնկրետ սոցիալական և միջանձնային իրականություն, որն ինչպես առաջարկում է շփման և փոխազդման հնարավորություններ, այնպես էլ որոշակի սահմանափակումներ և պարտականություններ է դնում հաղորդակցական ակտի մասնակիցների վրա՝ կապված վերջիններիս ստանձնած դերերի և դրանից բխող վարքագծային կաղապարների հետ: Հետևաբար խոսողը հաղորդակցական ակտը առավել արդյունավետ ելքով իրականացնելու համար պետք է ճիշտ գնահատի իր և խոսակցի փոխհարաբերությունը՝ հետևելով այդ հարաբերությամբ թելադրված կանոններին: Բնականաբար խոսողը նաև պետք է որոշակի պատկերացում ունենա այն մասին, թե ինչպես է խոսակիցը գնահատում իրենց փոխհարաբերությունը և, ըստ այդմ, ինչպիսի կանոնների պահպանում է ակնկալում խոսողից:

Հաղորդակցության գործընթացում լեզվական միջոցների ընտրությամբ պայմանավորված խտացման վրա մեծապես ազդում է նաև հաղորդակցական միջավայրը: Այսպես՝ հաղորդակցությունը տարածական և ժամանակային առումով մշտապես ամփոփված է որոշակի ֆիզիկական, մշակութային և սոցիալական իրադրության սահմաններում՝ կրելով այդ իրադրության կամ միջավայրի ազդեցությունը: Միջավայրը կարող է հանդես գալ որպես որոշիչ գործոն խոսքաստեղծման գործընթացում, որով պայմանավորված՝ խոսողը որոշում է իրականացնել տվյալ հաղորդակցական ակտը, թե ոչ, կամ իրականացնելու դեպքում ինչպիսի լեզվական միջոցներ գործածել առավելագույն հաղորդակցական արդյունքի ակնկալիքով: Օրինակ՝ եկեղեցու հանդեպ հարգանքը կարող է անհատին թույլ չտալ խոսել պատարագի ժամա-

նակ կամ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում խոսել շշուկով՝ գործածելով կրճատ ասույթներ:

Ամփոփելով ասվածը՝ գալիս ենք եզրակացության, որ **գործաբանական բնույթի տեղեկությունները խոսքաստեղծման գործընթացում պայմանավորում են լեզվական միջոցների ընտրությունը և լեզվական միջոցների տնտեսամամբ հնարավորությունն են ստեղծում ընդլայնել տեքստի տեղեկատվական ներուժը:** Սա հանդես է գալիս որպես տեքստի խտացման գործաբանական հիմք: Հենց վերոնշյալ գործաբանական գործոնների համատեքստում պետք է դիտարկել տեղեկատվության խտացման առանձնահատկությունները գիտական դիսկուրսում:

ԴԻՍԿՈՒՐՍ ԵՎ ԽՈՍՔ

Տեղին է նշել, որ «դիսկուրս» տերմինը լեզվաբանության մեջ միանշանակ մեկնաբանություն չունի: Ընդհանուր առմամբ դիսկուրս ասելիս պետք է հասկանալ «կապակցված խոսք, խոսընթացում կազմավորվող ասույթների խոսքաշար, որոնք փոխկապակցված են իմաստային և կառուցվածքային առումով, փոխառնչվում են ըստ խոսքային հաղորդակցման տրամաբանության և չեն խախտում հաղորդակցական դիտավորության բնականոն հաջորդականությունը...» (Պարոնյան, 2011: 48): Մակայն, ինչպես իրավամբ նշում է Շ.Հ. Պարոնյանը, գործաբանական լեզվաբանության մեջ կապակցված խոսքն անվանող մի քանի տերմիններ են կիրառվում (Պարոնյան, 2011: 48): Մասնավորապես՝ սույն ուսումնասիրության շրջանակներում կիրառվում են դիսկուրս և տեքստ տերմինները: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ այս երկու հասկացությունները հաճախ նույնացվում են կամ, ճիշտ հակառակը, տարբերակվում, մասնավորապես՝ դիսկուրսը նույնացվում է բանավոր խոսքի, իսկ տեքստը՝ գրավոր խոսքի հետ: Այսպես՝ Յ.Ե. Չուբարովան, խոսելով անգլերեն գիտաուսումնական դիսկուրսի կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների

մասին, դիսկուրսը սահմանում է որպես բանավոր խոսքին բնորոշ երևույթ, որպես «բարդ հաղորդակցական երևույթ, բանավոր խոսքային գործողություն, որը ներառում է հաղորդակցության մասնակիցների և վերջիններիս բնորոշ առանձնահատկությունների մասին պատկերացում տվող սոցիալական համատեքստը և խոսքարտադրման ու խոսքընկալման գործընթացները»: Նեղ իմաստով դիսկուրսը սահմանվում է որպես «լեզվական միավորների կապակցված հաջորդականություն, որը ստեղծվում է խոսողի կողմից որոշակի վայրում, որոշակի պահի, որոշակի նպատակով» (Чубарова, 2008: 27): Մինչդեռ մի շարք այլ լեզվաբաններ նման տարբերակում չեն մտցնում: Օրինակ՝ Տ.Ա. Ֆիլոնենկոն դիսկուրսը սահմանում է որպես «լեզվի՝ գործառապես պայմանավորված կիրառություն որոշակի հանրամշակութային իրադրության համատեքստում» (Филоненко, 2005: 29): Ն.Ա. Միշանկինան, տեքստը սահմանելով որպես «լեզվական կառույց, հաղորդակցության ակտի խոսքային բաղադրիչ, ավարտուն իմաստային կաղապարի իրացում», դիսկուրսը սահմանում է որպես «հաղորդակցական և խոսքային գործոնների ամբողջություն, որոնք պայմանավորում են այս կամ այն ոլորտում ընթացող հաղորդակցության իրականացման միջոցները, որոնք իրենց հերթին նյութական իրացում են ստանում տեքստի տեսքով...» (Мишанкина, 2010: 97-98): Ն.Ա. Միշանկինայի այս մեկնաբանությունը թերևս հարում է դիսկուրսի վերլուծության տեսության մեջ առավել տարածում գտած Ջ. Յուլի և Հ. Ուիդդոնսոնի տեսակետին, համաձայն որի՝ **դիսկուրսը բանավոր կամ գրավոր խոսքի գործարկման գործընթացն է, մինչդեռ տեքստը՝ այդ գործընթացի արդյունքը (անգամ եթե այն բանավոր հնչելուց հետո գրի չի առնվում կամ մոտացվում է)** (Widdowson, 2007; Yule, 2002): Մեզ համար միանգամայն ընդունելի է դիսկուրսի և տեքստի այս ըմբռնումը, հետևաբար մեր ուսումնասիրության շրջանակներում թե՛ «դիսկուրս», թե՛ «տեքստ» տերմիններն օգտագործվում են անվանելու ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր խոսքի դրսևորումները՝ իհարկե «գործընթաց-արդյունք» տարբերության գիտակցմամբ:

Ինչ վերաբերում է գիտական խոսք և գիտական դիսկուրս տերմինների մեկնաբանությանը, հարկ ենք համարում մեջբերել Ն.Դ. Արուստյանովայի հետևյալ սահմանումը. «Դիսկուրսը կապակցված տեքստ է իր արտալեզվական՝ գործաբանական, հանրամշակութային, հոգեբանական և այլ գործոններով հանդերձ: Դա տեքստ է, որը իրադրային հայեցակերպ ունի. խոսք է, որը դիտվում է որպես նպատակաուղղված հանրական գործունեություն, որպես բաղադրիչ, որը մասնակցում է մարդկանց փոխներգործության ընթացքում և նրանց գիտակցության կառույցներում (ճանաչողական գործընթացներում): Դիսկուրսը խոսք է, որն «ընկղմված» է կյանքի հոսանքում» (Арутюнова, 1990: 136): Ինչպես երևում է տվյալ սահմանումից, դիսկուրս տերմինը վերաբերում է գործարկվող խոսքին, խոսքային գործունեությանն իր լեզվական և արտալեզվական առանձնահատկությունների ամբողջության մեջ, մինչդեռ խոսք տերմինը հանդես է գալիս առավել չեզոք և ընդհանուր նշանակությամբ: Հետևաբար մեր պատկերացմամբ գիտական դիսկուրսը նույն գիտական խոսքն է, պարզապես տվյալ արտահայտության մեջ դիսկուրս բառի առկայությամբ ընդգծվում է այն փաստը, որ **գիտական հաղորդակցությունը, ինչպես նաև ցանկացած այլ ոլորտում տեղի ունեցող խոսքային փոխներգործություն, ընթանում է որոշակի արտալեզվական գործոնների համատեքստում և մշտապես կրում է դրանց ազդեցությունը:**

ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ԲՆՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիսկուրսի տիպաբանության հարցը մինչ օրս շարունակում է մնալ դիսկուրսի լեզվաբանության առաջատար խնդիրներից մեկը: Բանն այն է, որ գոյություն ունեն դիսկուրսի դասակարգման բազմազան սկզբունքներ: Հանրալեզվաբանության տեսակետից դիսկուրսի հիմնական տեսակների դասակարգման հիմքում ընկած են հաղորդակցության մասնակիցների փոխհարաբերությունը, մասնավորապես՝ հան-

րային դերերը և կարգավիճակը, ինչպես նաև հաղորդակցական նպատակները: Այսպես՝ Վ.Ի. Կարասիկը, ով մեծ ավանդ ունի գիտական դիսկուրսի ուսումնասիրության գործում, առանձնացնում է դիսկուրսի երկու հիմնական տեսակ՝ անձնային և ինստիտուցիոնալ (Карасик, 2002): Առաջին դեպքում խոսքնկերները հանդես են գալիս որպես անհատներ՝ ուրույն հարուստ ներաշխարհով, և նրանց նպատակն է հաղորդակցության միջոցով լուծել կենցաղային, առօրեական խնդիրներ, մինչդեռ ինստիտուցիոնալ դիսկուրսը հաղորդակցություն է, որն ընթանում է դերային և կարգավիճակային հարաբերությունների շրջանակում: Մասնավորապես՝ դիսկուրսի այս տեսակի մասնակիցները հարաբերվում են ոչ թե որպես անհատներ, այլ որպես հասարակության այս կամ այն ինստիտուտի ներկայացուցիչներ (օրինակ՝ գիտնականները՝ գիտական դիսկուրսում, քաղաքական գործիչները և ընտրողները՝ քաղաքական դիսկուրսում, քննիչն ու մեղադրյալը՝ իրավաբանական դիսկուրսում, ուսուցիչն ու աշակերտը՝ մանկավարժական դիսկուրսում, բժիշկն ու հիվանդը՝ բժշկական դիսկուրսում և այլն), և նրանց նպատակն է «հատուկ» տիպի տեղեկատվության հաղորդումն ու ստացումը, ինչպես նաև դրա արդյունքում «հատուկ» նպատակների և խնդիրների իրականացումը (օրինակ՝ գիտական տեսության տարածում և փորձի փոխանակում, քարոզարշավի իրականացում, նախաքննության կատարում, ուսուցում, բուժօգնության տրամադրում և այլն): Վ.Ի. Կարասիկը առանձնացնում է գիտական դիսկուրսը ինստիտուցիոնալ դիսկուրսի մի շարք այլ տարատեսակների կողքին, ինչպես օրինակ՝ մանկավարժական, քաղաքական, իրավաբանական, ռազմական, քննադատական, բարոյագիտական, վարչական, կրոնական, բժշկական, գովազդային, զանգվածային-լրատվական և այլն:

Վ. Ի. Կարասիկը տարբերակում է գիտական դիսկուրսի հետևյալ բաղադրիչները (Карасик, 2004).

ա. Մասնակիցներ,

բ. Նպատակներ, որոնք ենթադրում են հասցեատիրոջ կողմից հին գիտելիքի հիման վրա նոր գիտելիքի ձեռքբերմանն ուղղված գործու-

ներություն, որտեղ հասցեագրողի նպատակը և խնդիրը հասցեատիրոջ տեղեկացվածության և հաղորդակցությունից վերջինիս ունեցած ակնկալիքների մասին սեփական պատկերացումների հիման վրա տեղեկատվության հաղորդումն է: Այլ կերպ ասած՝ ենթադրվում է, որ գիտական դիսկուրսի մասնակիցը որոշ չափով ծանոթ է այլ գիտական տեքստերում ներկայացված հասկացություններին, գաղափարներին և տեսություններին, ինչը հասցեագրողին թույլ է տալիս տեղեկատվության որոշակի հատված հաղորդել ներակա կերպով՝ առանց տեքստի տեղեկատվական ամբողջականության խաթարման: Ընդ որում, ներակայվող տեղեկատվության ծավալը գիտական դիսկուրսի յուրաքանչյուր տարատեսակի և յուրաքանչյուր ժանրային դրսևորման համար տարբեր է: Ուստի գիտական դիսկուրսում տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու, հետևաբար և այն խտացնելու հարցում կարևոր դեր է խաղում միջտեքստայնությունը, որը դրսևորվում է ուղիղ և անուղղակի մեջբերումների, տերմինաբանական կապերի, հղումների և այլնի հաշվին:

գ. Քրոնոտոպը, որը ներառում է գիտական երկխոսությանը հատուկ միջավայրը և ժամանակը, որում այն ընթանում է: Ընդ որում, այս կապակցությամբ պետք է հաշվի առնել երկու կարևոր նկատառում: Գրավոր հաղորդակցության դեպքում գիտական դիսկուրսի մասնակիցների քրոնոտոպները չեն համընկնում, և գիտական դիսկուրսը միջտեքստայնության հաշվին դուրս է գալիս լոկալ ժամանակային սահմաններից:

դ. Արժեքները, որոնց շարքում Վ.Ի. Կարասիկն առանձնացնում է ճշմարտությունը, գիտելիքը և հետազոտությունը (Карасик, 2004: 231): Այս շարքին կարելի է վերագրել նաև գիտականության չափանիշները:

ե. Ռազմավարությունը, մասնավորապես՝ գիտական դիսկուրսի ռազմավարական խնդիրների շարքում Վ.Ի. Կարասիկը նշում է «ստացված արդյունքները մասնագետների և ոչ մասնագետների համար ընդունելի ձևով շարադրելու» կարևորությունը (Карасик, 2004: 231), որը ենթադրում է համապատասխան լեզվական միջոցների ընտրություն:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ գիտական դիսկուրսի ռազմավարությունը կախված է հաղորդակցության ձևից (գրավոր կամ բանավոր) և ժանրից (օրինակ՝ գիտական հոդված, մենագրություն, գիտաժողովի զեկույց և այլն), հաղորդակցության պայմաններից՝ իրական կամ վիրտուալ հաղորդակցություն, ինչպես նաև թիրախային լսարանից:

գ. Թեմատիկան, որը որոշվում է՝ ըստ գիտության համապատասխան բնագավառի: Վ.Ի. Կարասիկը երկու հիմնական թեմատիկ ուղղություն է առանձնացնում՝ հումանիտար և բնագիտական (Карасик, 2004: 232): Ըստ թեմատիկ ուղղվածության՝ գիտական տեքստերը տարբերվում են նաև լեզվառձևական առանձնահատկություններով:

է. Տարատեսակներ և ժանրեր, որոնց թվում առանձնացվում են ակադեմիական կամ բուն գիտական դիսկուրսը, գիտահանրամատչելի (գիտահրապարակախոսական) դիսկուրսը, դիդակտիկ կամ գիտատուսմնական, գիտագործնական (գիտատեղեկատվական) դիսկուրսը, գիտաքննադատական դիսկուրսը և այլն:

ը. Դիսկուրսիվ բանաձևերը, որոնք վերաբերում են գիտական դիսկուրսի իմաստաբանական և շարահյուսական առանձնահատկություններին: Դրանք ներկայացված են գիտության ենթալեզվում՝ գիտական ոճում, որին հատուկ է վերացականությունը, տրամաբանականությունը, միանշանակությունը և չեզոքությունը: Դա պայմանավորված է գիտական գործունեության գլխավոր նպատակով, որն է՝ գիտական տեղեկատվության ճշգրիտ, տրամաբանական և միանշանակ հաղորդումը:

թ. Նախադեպային տեքստերը, մասնավորապես՝ գիտական հաղորդակցությունը ենթադրում է անդրադարձ գիտության այս կամ այն ոլորտի շրջանակներում ձևավորված գիտելիքների համակարգին: Այդ իսկ պատճառով գիտական դիսկուրսի հիմնական բնութագրիչներից մեկը միջտեքստայնությունն է: Վ.Ե. Չերնյավսկայան առաջարկում է դիտարկել միջտեքստայնությունը որպես «բովանդակության մակարդակում գիտական տեքստի կառուցման համընդհանուր սկզբունք» (Чернявская, 2006: 49): Տեքստի մեջ այլ հեղինակի տեքստից վերաբերու-

թյան ձևով բառերի և բառակապակցությունների ներմուծումը, ըստ երևույթին, գիտական դիսկուրսում տեղեկատվության խտացման միտում է, որի դեպքում մի ամբողջ գաղափար, հասկացություն կամ նույնիսկ տեսություն խտացվում է մեկ տերմինի, տերմինաբանական արժեք ունեցող բառակապակցության կամ ասույթի սահմաններում: Այս կերպ հղում է կատարվում դեպի գիտական իմացության մի ամբողջ ոլորտ, որը ենթադրաբար այնքան ծանոթ է խոսքի հասցեատիրոջը, որ կարիք չկա այն արտակա կերպով ներկայացնելու տեքստի մակերեսային կառուցվածքում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ցույց է տալիս գիտական դիսկուրսի տիպաբանության վերլուծությունը, գիտական տեքստերի ստեղծման հարցում, բացի բուն ներլեզվական պատճառներից, մեծ է նաև արտալեզվական գործոնների դերը, որոնց բացատրությունը հնարավոր է գտնել գործաբանության մակարդակում: Սա թույլ է տալիս հաղորդակցության գործաբանական առանձնահատկությունները դիտարկել որպես գիտական դիսկուրսում լեզվական միջոցների ընտրությունը և համապատասխան զուգակցումը, հետևաբար և տեքստի խտացումը պայմանավորող երևույթ:

Ինչպես գիտենք, տեղեկատվական հազեցվածությունը, մի կողմից, և խոսքի տրամաբանականությունն ու հակիրճությունը, մյուս կողմից, գիտական խոսքի բնորոշ առանձնահատկություններից են, ինչի լավագույն ապացույցը գիտական խոսքում այնպիսի սեղմ լեզվական կառույցների առատ գործածությունն է, ինչպիսիք են դերբայական դարձվածները, անկախ կառույցները, զեղչված նախադասությունները, տարատեսակ մեջբերումները, աղյուսակները, գծապատկերները և այլն, որոնք բոլորը խոսքի խտացման օրինակներ են: Հետևաբար կարելի է պնդել, որ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացման միջոց հանդես եկող խտացումը գիտական խոսքի անբաժան մասն է: Եվ

ինչպես ցանկացած հասարակական երևույթ, այն, բացի ներքին պատճառներից, ունի նաև արտաքին պայմանավորվածություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պարոնյան Շ.** (2011), Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, ԵՊՀ հրատ., 298 էջ:
2. **Austin J.L.** (1962), How to Do Things with Words. Oxford: Clarendon Press, 168 p.
3. **Kempson M.R.** (1975), Presupposition and the Delimitations of Semantics. Cambridge: Cambridge University Press, 235 p.
4. **Searle J.R.** (1969), Speech Acts: An Essay in the Philosophy of Language. Cambridge: Cambridge University Press, 203 p.
5. **Widdowson H.G.** (2007), Discourse Analysis. Oxford: Oxford University Press, 126 p.
6. **Yule G.** (2002), Pragmatics. Oxford: Oxford University Press, 127 p.
7. **Арутюнова Н.Д.** (1990), Лингвистический энциклопедический словарь. Москва: Советская энциклопедия, 682 с.
8. **Гальперин И.Р.** (2004), Текст как объект лингвистического исследования. Москва: Эдиториал УРСС, 144 с.
9. **Жеребило Т.В.** (2005), Словарь лингвистических терминов. Назрань: Издательство "Пилигрим", 376 с.
10. **Карасик В. И.** (2002), Языковой круг: личность, концепты, дискурс и текст. Волгоград: Перемена, 476 с.
11. **Карасик В.И.** (2004), Языковой круг: личность, концепты, дискурс. Москва: Гнозис, 390 с.
12. **Лузина Л.Г.** (1997), Распределение информации в тексте: когнитивный и прагматический аспекты. Москва: УРСС, 139 с.
13. **Филоненко Т.А.** (2005), Жанрово-стилистические характеристики англоязычного научно-методического дискурса. Самара: Самарский государственный педагогический университет, 181 с.
14. **Чернявская В.Е.** (2006), Интерпретация научного текста. Москва: КомКнига, 248 с.
15. **Чубарова Ю.Е.** (2008), Функционально-структурные особенности и про-содические средства выражения дискурсивных элементов англоязычного учебно-научного дискурса. Саранск: Мордовский государственный университет, 171 с.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ABSTRACT

THE PECULIARITIES OF THE SELECTION AND TEACHING OF LEGAL TEXTS IN ESP

The article focuses on some of the challenges of teaching juridical sublanguage of English through reading professionally-oriented texts. It highlights the importance of the main content, cultural background and functional characteristics of juridical texts, discourses, creolized texts and virtual discourses to be used for teaching purposes as authentic material. The principles of the selection and teaching of legal authentic texts are targeted and analyzed within an ESP academic environment. Teaching conditions, individual characteristics of the students, stylistic and genre characteristics of juridical English are considered.

Key words: *legal texts, intercultural communication, discourse.*

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ОТБОРА И ПРЕПОДАВАНИЯ ЮРИДИЧЕСКИХ ТЕКСТОВ В ESP

В статье рассматривается проблема обучения юридическому подязыку английского языка посредством чтения профессионально-ориентированных текстов. Представлены основные содержательные и функциональные характеристики юридических текстов, дискурсов, креолизированных текстов и виртуальных дискурсов, которые используются в учебных целях в качестве аутентичного материала. Определены принципы отбора учебных и аутентичных текстов с точки зрения условий обучения, индивидуальных характеристик состава студентов, стилистических и жанровых характеристик английского юридического подязыка.

Ключевые слова: *юридический текст, дискурс, межкультурная коммуникация.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը դիտարկում է իրավաբանական տեքստի ընտրության և ուսուցման սկզբունքներն ու առանձնահատկությունները ESP դասընթացում: Ներկայացված են ուսումնական նպատակներով որպես բնագիր օգտագործվող իրավաբանական տեքստի, խոսույթի, կրեոլ տեքստի և վիրտուալ խոսույթի բովանդակային, միջմշակությային և գործաբանական առանձնահատկությունները:

Բանալի բառեր՝ *իրավաբանական տեքստ, խոսույթ, միջմշակությային հաղորդակցություն:*

Իրավաբանական կողմնորոշման անգլերենի ենթալեզվի ուսուցման դասընթացը նախագծելիս, անհրաժեշտ է իրականացնել ուսումնական և բնագրային տեքստերի ընտրություն, հաշվի առնելով դրանց բովանդակությունն ու մշակությային հենքը, ինչպես նաև ուսանողների նախասիրությունները, դրդապատճառային ուղղվածությունը, տարիքը, հետաքրքրությունները, իմացական, մասնագիտական պահանջմունքները և այլն:

Հաշվի առնելով միջմշակությային հաղորդակցման հմտությունների զարգացման առանձնահատկությունները, խնդիր է դրվում հստակորեն դասակարգել իրավաբանական տեքստերի ընտրության սկզբունքները: Միջմշակությային հաղորդակցության համատեքստում առաջին պլան են մղվում անգլերեն իրավաբանական տեքստերի ընտրության և դրանց միջոցով բառապաշարի ուսուցման գործաբանական, հաղորդակցական, ճանաչողական, խոսույթային մոտեցումները:

Գործաբանական մոտեցումը լայն հասկացություն է: Այն նախ և առաջ վերաբերում է լեզվակիրների հաղորդակցական վարքագծին, դրա բովանդակությանը: Ինչպես նշում են սույն հիմնախնդրի հետազոտողները, սովորողները պետք է յուրացնեն ուսումնասիրվող լեզվով հաղորդակցվողների շփման նորմերը, ավանդույթները, սովորույթները, որպեսզի գործաբանական մակարդակում պատրաստ լինեն շփվելու

լեզվակիրների հետ (Miloserdova, 2004: 85): Այստեղ անհրաժեշտ է տարբերակել անգլալեզու մարդկանց և անգլալեզու իրավաբանների հաղորդակցական նորմերը գործաբանական մոտեցման տեսանկյունից:

Ինչպես հայտնի է, «գործաբանական իրազեկությունը (Pragmatic competence) առնչվում է լեզվական պաշարների գործառական կիրառմանը (լեզվական գործառության իրագործում, խոսքային ակտ)՝ հաղորդակցական փոխներգործության մեխանիզմներին համապատասխան: Այն առնչվում է նաև խոսույթի ստեղծման կարողություններին, տեքստի կապակցվածությանը (cohesion) և իմաստային կապին (coherence), տեքստի տեսակների ու ձևերի ճանաչմանը, հեզնանքին ու նմանակմանը» (Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, 2005: 117-125):

Փաստորեն, խնդիր է դրվում ուսումնասիրել լեզվակիր իրավաբանների, իրավագետների հաղորդակցական վարքագծի նորմերը, այն սովորույթները, որոնք գերակշռող են անգլալեզու իրավաբանների շրջանում:

Դատաիրավական տեքստերն ուսուցողական նպատակներով ընտրելիս, խնդիր է դրվում բացահայտել հեղինակների՝ իրավագետների, իրավաբանների, փաստաբանների անձնային և մասնագիտական որակները:

Իրավաբանական տեքստերի ընթերցանությամբ անհրաժեշտ է ընդհանուր պատկերացում կազմել անգլալեզու իրավաբանների, իրավագետների խոսքային, ինչպես նաև ոչ խոսքային վարքագծի մասին, բացահայտել նորմերը և շեղումները:

Մեթոդիստները խնդիր են դնում մասնագիտական կողմնորոշման տեքստերի ընթերցանությամբ հիմք դնել ոչ միայն սովորողների գործաբանական իրազեկության զարգացմանը, այլև նպաստել հեշտությամբ հաղթահարելու գործաբանական փոխներթափանցման դեպքերը:

Հետազոտողները առանձնացնում են գործաբանության երկու հայեցակերպ՝ հասարակական և ճանաչողական: Հասարակական գոր-

ծախանությունը ապահովում է հաղորդակցական վարքագծի նկարագրությունը, իսկ ճանաչողական գործաբանությունը բացատրում է «ինչպես է այս կամ այն վարքագիծը ձևավորվել» հնարավոր ճանաչողական մեխանիզմներով» (Blakemore, 1992: 47):

Գործաբանական գիտելիքների փոխադեցության, փոխներթափանցման դրսևորումները դիտարկվում են նախ և առաջ միջմշակութային հաղորդակցության համատեքստում (Kotthoff, 2006: 271-304):

Գործաբանական փոխներթափանցման դրսևորումները անհրաժեշտ է հաշվի առնել անգլերեն դատաիրավական ենթալեզվի տարբեր շերտերը ուսուցման առարկա դարձնելիս:

Անգլերեն իրավաբանական տեքստեր ընթերցելիս, խնդիր է դրվում նաև ուսումնասիրել լեզվակիր իրավաբանների, իրավագետների վարքի, վարքագծի նորմերը: Այդ տեսանկյունից դատաիրավական տեքստերի ընտրությունը դժվարություն է ներկայացնում, քանի որ տեքստերի ընթերցանությամբ բացահայտել տվյալ ոլորտի տեքստերը ստեղծողների անձնային, հոգեբանական, մասնագիտական որակները շատ դժվար է:

Ուսուցողական նպատակներով անհրաժեշտ է ընտրել այնպիսի տեքստեր, որոնք ներկայացնում են ոչ միայն անգլիացի, այլև հայախոս իրավաբանների, իրավագետների խոսքային և ոչ խոսքային վարքագծի նորմերը: Ըստ Ն. Ն. Տրոշինայի՝ միջմշակութային հաղորդակցությունը դժվարագույն հաղորդակցական գործընթաց է: Այդ գործընթացը փոխընկալման և մերձեցման յուրահատուկ դրսևորում է, որի հաջող իրականացման համար անհրաժեշտ է գիտակցել նրա բաղադրամասերը և ոչ թե բացահայտել տվյալ մշակույթի չափանիշները (Трошина, 2002: 61-77):

Բովանդակային նոր բնութագրեր է ձեռք բերում իրավաբանական լեզուն նշանաբանական մոտեցման տեսանկյունից: Լ. Ա. Շեյգալը իրավաբանական լեզուն մեկնաբանում է որպես «նշանաբանական տիրույթ ձևավորող իրավաբանական խոսույթի նշանների կազմավորված ամբողջականություն» (Шейгал, 2000: 368): Այդ առումով կարևորվում են

կրեոլ կամ բարդ տեքստերը:

Ըստ Յու. Ա. Սորոկինի՝ կրեոլացված են այն տեքստերը, «որոնց ֆակտուրան բաղկացած է երկու ոչ համասեռ մասից՝ խոսքային և ոչ խոսքային, որը պատկանում է այլ նշանային համակարգի, ի տարբերություն բնական լեզվի (Сорокин, Тарасов, 1990: 227): Ներկայումս պատկերներով համակցված տեքստեր կարելի է գտնել շատ արագ՝ համացանցի միջոցով: Այդ առումով, ուսուցման տեսանկյունից արդյունավետ են անգլիացի հայտնի իրավագետների կյանքին ու գործունեությանը վերաբերող կրեոլ, պատկերազարդ տեքստերը, որոնք ուղեկցվում են լուսանկարներով, ծննդյան, ուսումնառության, բնակավայրերի, գործունեություն ծավալած դատարանի պատկերներով և այլն: Այդպիսի տեքստերը օգնում են ուսանողներին հաղթահարել միջմշակութային, մշակութային փոխներթափանցում առաջ բերող դժվարությունները: Ուսանողները այդպիսի տեքստերի միջոցով յուրացնում են թե՛ իրավաբանական առարկա-իրությունները, թե՛ բառ-իրությունները:

Միջմշակութային հաղորդակցման ուսուցման կարևոր պայման է օտարալեզու իրավաբանական խոսույթի հետ աշխատանքը: Դրա համար անհրաժեշտ է տարբերակել իրավաբանական խոսույթի հիմնական ժանրերը և տեքստերն ընտրել ըստ այդ ժանրերի:

Տ. Վ. Անիսիմովան առանձնացնում է իրավաբանական խոսույթի գրավոր ժանրերը՝ օրենսդրական տեքստ, պայմանագիր, դատաիրավական համակարգի հետ կապված փաստաթղթերը /դատական որոշում, բողոքարկում, գործ և այլն/, ֆիզիկական և իրավաբանական անձերի փաստաթղթերը՝ վկայական, անձնագիր, արտոնագրում, կարգ և այլն/ իրավաբանական լրագրություն, իրավական դոկտրինա, այսինքն՝ գիտական տեքստ, բանավոր ժանրեր, իրավաբանական խորհրդատվություն, դատական խոսք, ճառ /դատարանում մեղադրյալի/փաստաբանի ելույթը, երդման բերելը, վկաների հարցումը/, ոստիկանության հարցաքննությունը (Анисимова, 2000: 417):

Ակնհայտ է, որ նշված ժանրերով տեքստերի ընթերցանությունը միջմշակութային բնույթի դժվարություններ է պարունակում: Խնդիրն

այն է, թե ուսուցման որ փուլում ինչ ժանրերով անգլերեն իրավաբանական տեքստեր ուսումնասիրել: Հատկապես արդյունավետ է իրավաբանական խոսույթի հետ իրավաբանական բառապաշարի ուսուցմանը միտված աշխատանքը, քանի որ խոսույթը լինելով հարաշարժ և իրադրային, ուսուցողական նպատակներով կիրառելիս նպաստում է նոր ուսումնական, պրոբլեմային իրադրությունների ստեղծմանը, լեզվակիրներին բնորոշ խոսքային իրադրությունների կաղապարմանը: Այդ առումով կարելի է առանձնացնել Մ. Գ. Յերցվաձեի մոտեցումը, ըստ որի՝ «խոսքային գործունեության տեսության շրջանակներում առաձնացնում են երկու հայեցակետ՝ խոսույթի ստեղծումը և սերումը /կշռադատում, պլանավորում, խոսելը, գրավոր ձևակերպումը/, և խոսույթը հասկանալը /ունկնդրում, գրավոր տեքստի ընկալում, վերլուծություն և մեկնաբանություն/» (Церцвадзе, 2011: 163-168):

Միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման տեսանկյունից կարևոր է այն, որ իրավաբանական խոսույթը ներառում է իրավունքի հասկացությունների լայն սպեկտր՝ ապացույց, արժանապատվություն, ճշմարտություն, հայցադիմում, մեղք, օրենք, գրպարտանք, իրավունք, արդարադատություն, արժանապատվություն, վկա, դատ, պատիվ, դատավճիռ և այլն:

Լեզվաբանները, իրավաբանական տեքստի բովանդակության վերլուծությամբ, առանձնացնում են իրավաբանական խոսույթի հետևյալ նպատակները՝ տեղեկատվական, վերլուծական, գնահատող, ներագդող, կանխատեսող, որոնք արտահայտվում են ինչպես explicit, այնպես էլ implicit միջոցներով:

Կարևոր դիտարկում է այն, որ իրավաբանական խոսույթը գերակա դիրք է գրավում կենցաղային խոսույթի նկատմամբ: Իրավաբանական տեքստը ստեղծվում է արդեն գոյություն ունեցող տեքստերի հիման վրա:

Իրավաբանական տեքստերի ընտրության կարևոր պայման է տեքստը խոսույթի մակարդակում դիտարկելը: Դա նշանակում է, որ «տեքստ» հասկացությունը դիտարկվում է իր լայն իմաստով՝ որպես

շարունակաբար զարգացող մակրոտեքստ: Այդ տեսանկյունից կարևորվում են նեղ մասնագիտական իրավաբանական, իրավական, իրավատնտեսական տեքստերը:

Իրավաբանական տեքստերի վերլուծական ընթերցանությամբ, ապագա իրավաբանները կարող են ընդհանուր պատկերացում կազմել իրավական ոլորտում հաղորդակցության մասին:

Իրավաբանական տեքստերի ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունեն ճարտասանական տեքստերը, քանի որ իրավական ոլորտը հնարավոր չէ ամբողջական ներկայացնել առանց դրանց հետևողական ուսումնասիրման: Ցանկացած համաժողով, դատական նիստ, դատավորների, հաշտարարների, երդվյալ ատենակալների հանդիպում պարունակում է ճարտասանական արվեստի տարրեր:

Գիտենալով և տարբեր ուսումնադերային վիճակներում խաղարկելով ճարտասանական ելույթի տեսակները՝ ուսանողները ոչ միայն նոր բռնապաշար են յուրացնում, այլև սկսում են հնարավորինս ճիշտ պատկերացում կազմել լեզվակիր իրավագետների, իրավաբանների մտածելակերպի, ազգամշակութային կարծրատիպերի, հաղորդակցական լեզվակաղապարների մասին (Пригари́на, 2009: 181-184):

Ըստ Ն. Կ. Պրիգարինայի՝ դատական խոսքին բնորոշ է հռետորի և ունկնդիրների միջև հեռավորության հաղթահարումը: Դրան հասնում են դերանվանական նշույթների կիրառմամբ (*we all, together with you / Now, we all know that the killer cut his left hand because we have the blood drops to the left side of the bloody shoe prints/*).

Ն. Կ. Պրիգարինան ցույց է տալիս, որ հռետոր-դատախազը կամ մեղադրող կողմը տարբեր հնարներ է կիրառում դատական ընթացակարգում տեղ գտած թեժ պայքարը, հակադրվող կողմերի հակամարտությունը ցույց տալու համար: Այսպիսով՝ հռետոր-դատախազը կիրառում է պայքարի և օտարացման տարբեր ձևեր՝ ընթացակարգային, ինստիտուցիոնալ, մտավոր, տերիտորիալ-կարգավիճակային: Կոնկրետ օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ ապագա իրավաբանները ծանոթանալով անգլախոս իրավաբանների ճարտասանական

հնարներին, կկարողանան ոչ միայն հասկանալ իրավաբանական բնույթի ճարտասանական տեքստերը, այլև թարգմանել և վերարտադրել: Ստորև տրվում են Ն. Կ. Պրիգարինայի կողմից առանձնացված տիպական օրինակները: Նա առանձնացնում է պայքարի և օտարացման հետևյալ ընթացակարգային ձևերը՝

Them versus Us - Նրանք մեր դեմ են: Օրինակ՝ ... Trial lawyers, brought in from Denver, Colorado, to represent these people against our common person, Kim Pring, who stood up to the evil empire : Հեղինակը մեկնաբանում է տվյալ օրինակը հետևյալ կերպ՝ «դատախազի և պաշտպանողի միջև մեծ տարբերություն կա: Դատախազի հետևում լուռ, սառն ու անհողողող օրենքն է, իսկ պաշտպանողի հետևում կենդանի մարդիկ են»:

Հետաքրքիր են նաև իրավաբանական ճարտասանական տեքստի խոսույթաստեղծ ներուժի տեսանկյունից հանդես եկող ինստիտուցիոնալ հնարները՝

VIP people versus little people - «ՎԻՊ» մարդիկ հասարակ մարդկանց դեմ: Հեղինակը մեկնաբանում է «A great part of the case, folk, is the pain and the misery and the anger that ordinary people and I feel against big guys from big cities to judge us» նախադասությունը հետևյալ կերպ՝ «Մյուս կողմից ուժեղներին չի կարելի մեղադրել առանց հիմքի»:

Պաշտպանական խոսքի տիպական հնարներից են մտավոր և տերիտորիալ-կարգավիճակային հնարները՝

- մտավոր (fancy people versus common people - խելոքները սովորական մարդկանց դեմ. համեմատեցեք՝ ... they aren't proven or disproven by fancy people that come from Stanford University to tell you and me how to think or how we read.

- տերիտորիալ-կարգավիճակային (city boys versus farm boys – քաղաքացիները գյուղաբնակների դեմ. համեմատեցեք՝ Are we talking about farm boys like Eddie and me and city boys like Mr. Guccione? Մեր երկիրը բազմացել է: Ոչ բոլոր ազգություններն են, դժբախտաբար, օգտվում նույն իրավունքներից: Նրա ցեղը, կամա, թե ակամա քավում է

այլոց մեղքերը:

Պաշտպանական խոսքը ուսուցողական նպատակներով կիրառելիս, ուսանողները յուրացնում են լեզվակիր իրավաբաններին բնորոշ խոսքային հնարները, որոնք ոչ միշտ են համընկնում հայերենին: Օրինակ, անգլիացիները օգտագործում են ապրումակցման հնարը՝

I greatly sympathize with..., I really feel for you..., I share in your sorrow..., I have nothing but pity in my heart for the witness...

Թարգմանությունը ցույց է տալիս, որ հայերենին բնորոշ են լրիվ այլ խոսքային վարվեցողության, զգայական բառեր և բառակապակցություններ: Անգլախոս իրավաբանները ճարտասանելիս գործածում են տարբեր բառակապակցություններ, որոնք դժվարություն են ներկայացնում նախ և առաջ միջմշակութային հաղորդակցման տեսանկյունից: Օրինակ՝

Not everybody, not everybody wants to live up to the law or follow the law. Not everybody thinks that the law applies to them. No one is above the law; not the police, not the rich, no one. O.J. Simpson isn't above the law.

Հիմնականում նրանք նախընտրում են գործածել ոչ միայն խոսքի սկիզբը ներկայացնող բառեր և բառակապակցություններ (to commence with, opening the debates, as a primary consideration etc), այլև ընթացակարգային (first, second, last etc.), կամ՝ հակասական՝ (in direct contradiction, on the contrary, doubtful, illogical, ambiguous etc.), հակադրական (in comparison to, although, even though, in spite of the fact that, despite the fact that, nevertheless etc.), վերաբերական (referring to, to remind, don't forget, appealing to etc.), լրացական (besides, in addition, to add etc.), - նպատակային (finally, to conclude, summing up etc.) և այլ բառեր և կապակցություններ:

Իրավաբանական տեքստերն ուսուցողական նպատակով ընտրելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նշված բառերի և բառակապակցությունների թարգմանության, յուրացման առանձնահատկությունները և ակտիվ խոսքում կիրառելու հնարավորությունները:

Ինչ վերաբերում է բանավոր իրավաբանական խոսույթին, ապա

դրանք ներառում են հատվածներ բանակցություններից, իրավաբանական բնույթի խոսակցություններից, փաստաբանական գործունեությունից, իրավական տեքստերից: Այդպիսի խոսույթներում կիրառվում են ինչպես նշութավորված, այնպես էլ ոչ նշութավորված կադապարային դարձվածներ:

Խոսույթը տարբեր սահմանումներ ունի: «Այն կապակցված տեքստ է, որն ամբողջանում է արտալեզվաբանական /գործաբանական, հանրալեզվաբանական և հոգեբանական գործոններով (Аргументова, 1990: 136-137): Ուսուցողական նպատակներով իրավաբանական խոսույթը կիրառելիս, անհրաժեշտ է բացահայտել դրա ժանրային առանձնահատկությունները:

Գիտնականներն առանձնացնում են իրավաբանական խոսույթի գրավոր ժանրերը՝ օրենսդրական տեքստը, պայմանագիրը, դատավարության հետ կապված փաստաթղթերը /դատական որոշում՝ legal authority, authority, judicial award, cognition, legal judgment, judgment, judicial decision, decree of the court, decree, court holding, holding, բողոքարկում՝ appeal case, petition of appeal, դատական նիստի արձանագրություն՝ court record(s), գործ՝ case և այլն/, ֆիզիկական և իրավաբանական անձանց փաստաթղթերը /վկայական՝ certificate, անձնագիր՝ passport, արտոնագիր՝ permit, license , կտակ՝ (last) will; testament, կանոնակարգ՝ charter, article, (ընկերության) by-laws, by-law, constitution, manual, standing orders, regulation/, իրավաբանական հրապարակախոսություն՝ juridical journalism, իրավական դոկտրինա՝ legal doctrine և գիտական տեքստը, ինչպես նաև բանավոր ժանրերը՝ իրավաբանական խորհրդատվություն՝ legal counseling, դատական խոսք՝ pleadings, մեղադրողի ելույթը դատարանում՝ prosecutor's speech in court, երդման բերելը՝ adjuration, administration of the oath, վկաների քննում՝ hearing of witnesses, երդվյալ դատավորների գործի ծանոթացում՝ country, lay people, fact triers direction, դատավճիռ՝ sentence, verdict, ոստիկանական քննություն՝ police interrogation:

Ինչպես նշում է Լ. Ա. Բորիսովան, «անգլերեն իրավաբանական

խոսույթում իրավական տեքստը ներկայացված է այնպիսի տարատեսակներով, ինչպիսին են հոդվածը, կանոնադրությունը /statute/ և լիազորված օրենսդրությունը /delegated legislation/ (Борисова, 2010: 16):

Ըստ նույն հեղինակի՝ «Ժանրերի ենթահամակարգում կենտրոնական տեղ է գրավում հանրային հոդվածը: Միջմշակութային հաղորդակցման տեսանկյունից կարևորվում են իրավական հոդվածներում կիրառվող տերմինները և հասկացությունները (Борисова, 2010:17): Մասնագիտական կողմնորոշման իրավաբանական բնույթի բնագրային տեքստերի ընտրությունը կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- բնագրային իրավաբանական տեքստը պետք է լինի մատչելի, հետաքրքիր, տեղեկատվական առումով բազմաբնույթ և արդիական, մասնագիտական առումով բովանդակալից,
- պետք է իրականացնի կրթադաստիարակչական և տեղեկատվական, ճանաչողական և վերճանաչողական գործառնություններ,
- պետք է ներկայացնի անգլախոս իրավաբանների մասնագիտական գործունեության և կենսակերպի, կենցաղավարության առանձնահատկությունները, մշակութային, ներմշակութային, միջմշակութային բնույթի իրողությունները, ինչպես նաև գործաբանական բնույթի իրականությունները:

Արդյունավետ է իրավաբանական հիպերտեքստերը կիրառել որպես անգլերենի ուսուցման միջոց: Ինչպես հայտնի է, հիպերտեքստերը կառուցվածքային առումով գծային չեն և ներառում են իրար հետ չհատվող տեղեկատվական աղբյուրներ, ընդ որում՝ դրանց միջև կարող են հաստատվել խաչաձև հղումներ (Шехтман, 2005: 74-85):

Միջմշակութային հաղորդակցության ուսուցման գործընթացում հիպերտեքստերը բազմագործառնությո են: Նրանք փոխում են հասցեագրող - հասցեատեր, հաղորդող - ընդունող, հեղինակ - ընթերցող հարաբերությունների դինամիկան: Կարևոր է այն, որ հիպերտեքստերի միջոցով հնարավոր է անսահման քանակությամբ տեքստեր ներմուծել՝ դրանով իսկ կիրառվել մշակութային, մասնագիտական բնույթի բացերը

լրացնելու համար: Ընդ որում՝ համակարգչային, տեղեկատվական տեխնոլոգիայի կիրառմամբ տեղեկատվության որոնումը շատ արագ է իրականացվում: Մյուս առավելությունն այն է, որ ընթերցողն իր որոնողական աշխատանքում ազատ է և միշտ ունի որոշում ընդունելու այլընտրանք (Smoliar, 1983: 34-36):

Ուսանողների միջմշակութային հմտությունների զարգացման տեսանկյունից կարևորվում է հատկապես վիրտուալ խոսույթի կիրառումն ուսուցման գործընթացում, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտվել համացանցային հաղորդակցության առավելություններից:

Վիրտուալ խոսույթի ուսումնական նպատակներով կիրառումը հնարավորություն է ընձեռում զարգացնել ուսումնական և արտասումնական պայմաններում ուսանողների մենախոսական և երկխոսական խոսքը: Ինչպես նշում է Ե. Ն. Գալիչկինան. «Համակարգչային հաղորդակցության առանձնահատկությունն այն է, որ կիրառվում են ոչ միայն մասնագիտական եզրեր, այլև այնպիսի բառամիավորներ, որոնք վերաբերում են տարբեր ոճերի և ռեգիստրերի, որոնք կազմավորվում են համաձայն համակարգչային ցանցի գործաբանական դիրքորոշումների և շփման նպատակների» (Галичкина, 2001: 19):

Այսպիսով՝ իրավաբանական կողմնորոշման անգլերենի ենթալեզվի ուսուցման դասընթացում տեքստերն ընտրելիս, հաշվի են առնվում տարբեր գործոններ՝ ուսանողների մասնագիտական պահանջմունքները և նախասիրությունները, անգլոամերիկյան և հայրենական իրավական ավանդույթների նմանությունները և տարբերությունները, ժամանակակից անգլերեն բառապաշարի յուրահատկությունները, տեքստերի, խոսույթների, կրեոլ տեքստերի, հիպերտեքստերի, վիրտուալ տեքստերի ոճաժանրային առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ դասընթացի նախագծման և կազմակերպման մանկավարժական պայմանները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Miloserdova E.V.** (2004), National Cultural Stereotypes and Problems of Intercultural Communication. Foreign Languages at School, p. 85
2. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, 2005, էջ 117-125:
3. **Blakemore D.** (1992), Understanding Utterances: An Introduction to Pragmatics. Oxford, p.47
4. **Kotthoff H.** (2006), Pragmatics of Performance and the Analysis of Conversational Humor., pp. 271-304
5. **Трошина Н.Н.** (2002), Лингвопрагматический аспект межкультурной коммуникации в исследованиях Ренаты Ратмайр // ЭРЖЕ, с. 61-77.
6. **Шейгал Е. И.** (2000), Семиотика политического дискурса: Монография / Ин-т языкознания РАН; Волгогр. гос. пед. ун-т. – Волгоград: Перемена, 368 с.
7. **Сорокин Ю.А., Тарасов Е.Ф.** (1990), Креолизованные тексты и их коммуникативная функция [текст] / Ю.А.Сорокин, Е.Ф.Тарасов - М.: Наука, 227с.
8. **Анисимова, Т.В.** (2000), Типология жанров деловой речи: риторический аспект : дис. ... д-ра филол. наук : 10.02.19 / Т.В. Анисимова. - Краснодар, 417 с.
9. **Церцвадзе М. Г.** (2011), Проблема изучения юридического дискурса в современной лингвистике: Юрислингвистика. № 11. С. 163-168.
10. **Пригарина Н.К.** (2009), Риторические параметры жанра судебной речи в практике русских и англоговорящих судебных ораторов. [Текст] / Н.К. Пригарина // Вестник Московского государственного областного университета. – Серия "Лингвистика".– 2009. – № 3. – М.: Изд-во МГОУ, С.181-184. www.vestnik-mgou.ru/mag/2009/ling/3/st39.pdf:
11. **Арутюнова Н. Д.** (1990), Дискурс // Лингвистический энциклопедический словарь. М.: Советская энциклопедия, С. 136-137.
12. **Борисова, Л. А.** (2010), Композиция и языковые особенности статута как поджанра в англоязычном юридическом дискурсе: к. ф. н., 212
13. **Шехтман, Н. А.** (2005), Понимание речевого произведения и гипертекст / Н.А. Шехтман. – Оренбург: Изд-во ОГПУ, 168 с.
14. **Stephen W., Smoliar** (1983), Review of “Literary Machines” by Ted Nelson, pp.34-36
15. **Галичкина Е. Н.** (2001), Специфика компьютерного дискурса на английском и русском языках (на материале жанра компьютерных конференций) / Е. Н. Галичкина // Автореф. дис. ... канд. филол. наук. - Волгоград, 19 с.

ԼԵԶԿԱԿԱՆ ՏՆՏԵՍՄԱՆ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔՈՒՄ

ABSTRACT

SUPRA-SYNTACTIC REALIZATION OF LANGUAGE ECONOMY IN ENGLISH SCIENTIFIC DISCOURSE

Compression of information as the economy principle realization in discourse consists in the reduction of language units and maintenance of the general content of the message. It includes all the levels of linguistic structure. The given article is an attempt to elaborate on the idea that in English scientific discourse, compression often occurs through conveying implicit information at the supra-syntactic level, where various types of presuppositions, paralinguistic parameters of communication as well as different means of visual presentation of content such as diagrams and tables, carry out a major text-organizing function. The provisions developed as a result of the research have a major practical value and can be used in teaching English for academic purposes.

Key words: *language economy, compression, English for Academic Purposes, supra-syntactic level, presupposition, paralinguistic parameter.*

РЕЗЮМЕ

ПРОЯВЛЕНИЕ ЯЗЫКОВОЙ ЭКОНОМИИ НА СВЕРХФРАЗОВОМ УРОВНЕ В АНГЛИЙСКОМ НАУЧНОМ ДИСКУРСЕ

Компрессия информации, как способ реализации принципа языковой экономии в речи, проявляется в виде сокращения языковых единиц и сохранения общего содержания сообщения, пронизывая все уровни языковой структуры. В настоящей статье выдвигается мнение о том, что в англоязычном научном дискурсе часто компрессия реализуется посредством имплицирования информации на уровне сверхфразового единства, где в качестве смыслообразующих элементов текста выступают пресуппозиции, паралингвистические параметры коммуникации, а также различные диа-

граммы, таблицы и прочие средства графического представления информации. Положения, разработанные в результате исследования, имеют важную практическую значимость и могут быть использованы в преподавании английского для академических целей.

Ключевые слова: языковая экономия, компрессия, английский для академических целей, сверхфразовой уровень, пресуппозиция, паралингвистический параметр.

ԱՄՓՈՓՈՒՄ

Տեղեկատվության խտացումը՝ որպես լեզվական տնտեսման սկզբունքի իրացում խոսքում, դրսևորվում է լեզվական միավորների կրճատմամբ և ընդհանուր բովանդակության պահպանմամբ և ներառում է լեզվական համակարգի բոլոր մակարդակները: Սույն հոդվածում առաջ է քաշվում այն տեսակետը, որ անգլերեն գիտական դիսկուրսում հաճախ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու հաշվին խտացումը տեղի է ունենում ոչ թե մեկ ասույթի, այլ ամբողջ տեքստի կամ վերասույթային մակարդակում: Այստեղ տեքստի իմաստի ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում կանխենթադրույթները, խոսակիցների կիրառած հարալեզվական միջոցները, ինչպես նաև գրավոր կամ բանավոր խոսքին ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերները: Հետազոտության արդյունքում մշակված դրույթներն ունեն կարևոր կիրառական նշանակություն և կարող են օգտակար լինել ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման շրջանակում:

Բանալի բառեր՝ լեզվական տնտեսում, խտացում, ակադեմիական անգլերեն, վերասույթային մակարդակ, կանխենթադրույթ, հարալեզվական միջոց:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքային գործունեության ընթացքում խոսակիցների կողմից հաղորդակցական միջոցներ ընտրելու և դրանք համապատասխանաբար զուգակցելու հարցում կարևոր դեր է կատարում լեզվական տնտեսման սկզբունքը, որը ունի բավականին երկարատև հետազոտա-

կան պատմություն: Այս երևույթը դրսևորվում է լեզվի տարբեր հայեցակերպերում՝ հնչույթային, բառային, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական: Ավանդաբար լեզվական տնտեսումը լուսաբանվել է տարածամանակյա հայեցակետով, մասնավորապես՝ լեզվի պատմական զարգացման ընթացքում լեզվի հնչյունական կազմի կրած փոփոխությունների մեկնաբանության լույսի ներքո: Ավելի ուշ շրջանի լեզվաբանության ուշադրության կենտրոնում առավել հաճախ հայտնվել են լեզվական տնտեսման սկզբունքի իրացման կոնկրետ միջոցները, որոնք, որպես կանոն, ուսումնասիրվել են նկարագրական լեզվաբանության դիրքերից: Ընդ որում, հաճախ նույնիսկ չի էլ գիտակցվել դրանց մեծ հաղորդակցական ներուժը և տեքստակազմիչ նշանակությունը: Սակայն վերջին շրջանի հետազոտությունները ցույց են տալիս, որ լեզվական տնտեսման միջոցները, թեև ձևի առումով սեղմ, բայց իմաստային առումով տարրորոնակ կառույցներ են: Այսինքն՝ դրանք թույլ են տալիս ձևավորել զանազան ներակա իմաստներ և կանխենթադրույթներ, որոնք միտված են արտահայտելու առավելագույն տեղեկատվություն լեզվական միավորների նվազագույն կազմով՝ ապահովելով մտքի կուռ և տրամաբանական կառուցվածք, հակիրճություն, տեղեկատվական հագեցվածություն, ժամանակի և տեղի տնտեսում և այլն: Թերևս դրանով էլ կարելի է բացատրել լեզվական տնտեսման միջոցների լայն կիրառությունը տարբեր գործառական ոճերում, այդ թվում՝ գիտական խոսքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՏԱՅՈՒՄԸ ՎԵՐԱՍՈՒՅԹԱՅԻՆ ՍԱԿԱՐԴԱԿՈՒՄ

Ինչպես ցույց է տալիս կատարված հետազոտությունը, խտացումը դրսևորվում է լեզվի բոլոր մակարդակներում՝ սկսած հնչյունաբանությունից, վերջացրած իմաստաբանությամբ, ընդ որում՝ յուրաքանչյուր մակարդակում այն յուրօրինակ դրսևորում է գտնում: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ընդունելով խտացման առկայությունը գրեթե

բոլոր լեզվական մակարդակներում՝ տարբեր լեզվաբաններ տարբեր թվով մակարդակներ են առանձնացնում և խտացման տարբեր օրինակներ են բերում:

Այս ուղղությամբ մեծ աշխատանք են կատարել Ա.Պ. Վասիլևսկին և Յ.Մ. Էդմինս (Василевский, Эдмина, 1967: 37-38), որոնք առանձնացնում են խտացման դրսևորման հետևյալ վեց մակարդակները. 1. հնչույթաբանական կամ գրույթի մակարդակ (հնչույթի կամ գրույթի բացթողում), 2. ձևաբանական (հապավումների առաջացում), 3. շարահյուսական (նվագագույնս լիակառույց կաղապարների գործածություն), 4. բառային (տեքստում բառերի բացթողում), 5. շարահյուսական-բառային (սպասարկող և օժանդակ բառերի բացթողում) և 6. իմաստաբանական (տեղեկատվության պակաս կարևոր մասի բացթողում):

Ընդհանուր առմամբ ընդունելով Ա.Պ. Վասիլևսկու և Յ.Մ. Էդմինսի դասակարգումը՝ հարկ ենք համարում շարահյուսական մակարդակի սահմաններում առանձնացնել նաև **տեքստային կամ վերաստույթային մակարդակը** և տեքստի շրջանակում կանխենթադրությունների հիման վրա տեղեկատվության որոշակի հատվածների ներակայումը կամ տեղեկատվությունը սեղմելու նպատակով որոշակի տեքստային հատվածների կրճատումը դիտարկել որպես խոսքի խտացման դրսևորում հենց այս մակարդակում: Բանն այն է, որ որքան էլ տեղեկատվության բացթողումը պայմանավորված լինի հաղորդման ընդհանուր իմաստային կառուցվածքով, բացթողնված կամ խտացման արդյունքում որպես ներակա ընկալվող տեղեկատվության վերականգնումը հնարավոր է միայն տեքստի՝ որպես կոտ ամբողջության հարթության վրա: Ըստ էության, առաջարկվող տեքստային կամ վերաստույթային մակարդակն ինչ-որ առումով մոտ է վերոնշյալ դասակարգման մեջ նշված իմաստաբանական մակարդակին: Մակայն ավելորդ ենք համարում, որպես այդպիսին, իմաստաբանական մակարդակի առանձնացումը, քանի որ, ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, իմաստաբանական կամ տրամաբանական բնույթի հարաբերություններ նկատվում են նաև շարահյուսական մակարդակում: Այսպիսով՝ **լեզվական տնտե-**

սումը շարահյուսական մակարդակում հաճախ հանդես է գալիս տեղեկատվությունը սեղմ դարձնելուն ուղղված՝ վերասույթային մակարդակի կրճատումների միջոցով, որոնց ուսումնասիրությունը գործաբանության դիրքերից կազմում է սույն ուսումնասիրության առարկան:

ՎԵՐԱՍՈՒՑԹԱՅԻՆ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԻ ՏԵՔՍՏԱԿԱԶՄԻՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

Անգլերեն գիտական դիսկուրսում հաճախ տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու հաշվին խոսքի խտացումը տեղի է ունենում ոչ թե մեկ ասույթի, այլ ամբողջ տեքստի կամ վերասույթային մակարդակում, որտեղ տեքստի իմաստի ձևավորման հարցում կարևոր դեր են կատարում **կանխենթադրույթները**: Ամփոփելով լեզվաբանության մեջ տարածված տեսակետերը՝ կարող ենք բնութագրել կանխենթադրույթները որպես նախնական գիտելիքներ, որոնք մասնակցում են ասույթի իմաստի ձևավորմանը՝ ստեղծելով պայմաններ դրա ճիշտ ընկալման համար (Knell, 2008; Blakemore, 2002; Gonzalez, 2000; Brown & Yule, 1983; Ostman, 1986; Chilton & Schaffner, 2002; Carston, 2008; Diessel, 2004; Fairclough, 2003): Առանձնացվում են տեքստային կանխենթադրույթները՝ այն նախնական գիտելիքները, որոնց սկզբնաղբյուրը հենց տեքստն է, կենցաղային կանխենթադրույթները՝ կյանքի տարրական իրողությունների իմացությունը, որն ընդհանուր է բոլոր լեզվակիրների համար, և հանրագիտարանային կանխենթադրույթները՝ գիտական (պատմական, աշխարհագրական, բնագիտական, տեխնիկական և այլն) և մշակութային բնույթի տեղեկությունների ամբողջությունը, որը հնարավոր է դարձնում տեքստի բաց թողնված, բայց վերականգնելի հատվածների ավելի խորը և ճիշտ ընկալումը (Yule, 2010; Grice, 1989; Шефедова, 1983):

Այսպես՝

...Well, right about the same time, around 1950, concerns developed about the loss of Southeast Asia. That's what led the United States into the Indochina wars...

...But the decline continues. In the last 10 years, there's been a very important event: the loss of South America. For the first time in 500 years, the South -- since the conquistadors, the South American countries have begun to move towards independence and a degree of integration...

...Well, moving on to just last year, the Arab Spring is another such threat. It threatens to take that big region out of the grand area. That's a lot more significant than Southeast Asia or South America.... (Ch.O.W.: 8:46-13:16)

Ն. Խոմսկու՝ Մասաչուսեթսի համալսարանում կարդացած դասախոսությունից վերցված այս հատվածում կարելի է գտնել տեքստի կանխենթադրույթների հիման վրա տեքստի մակերեսային կառուցվածքից տեղեկատվության որոշակի մասի բացթողման օրինակ: Քանի որ ելույթ ունեցողը դասախոսության նախորդ հատվածներում հանգամանորեն անդրադարձել է Հարավարևելյան Ասիայի և Հարավային Ամերիկայի կորստին, խոսելով Արաբական գարնան և Միջին Արևելքում ԱՄՆ վարած քաղաքականության մասին՝ պարզապես մեկ նախադասությամբ (...That's a lot more significant than Southeast Asia or South America...) թուցիկ համեմատում է այն վերոնշյալ երկու տարածաշրջաններում ԱՄՆ ունեցած կորստի հետ՝ արտակա կերպով չնշելով տվյալ տարածաշրջաններում ԱՄՆ դիրքերի թուլացման, ազդեցության կորստի փաստի մասին, քանի որ վստահ է, որ ունկնդիրները հեշտությամբ նախորդող համատեքստից կվերականգնեն բաց թողնված տեղեկատվությունը: Այս կերպ՝ Ն. Խոմսկին, տնտեսելով լեզվական միջոցները և ներակա կերպով հաղորդելով տեղեկատվության որոշակի հատվածը, միաժամանակ տնտեսում է դասախոսությանը հատկացված ժամանակը, խուսափում է ավելորդ կրկնությունից՝ դրանով իսկ չնոգնեցնելով ունկնդիրներին և վերջիններիս ուշադրությունը հրավիրելով նոր տեղեկատվության, այն է՝ ԱՄՆ միջինարևելյան քաղաքականու-

թյան վրա: Ունկնդիրներն էլ իրենց հերթին, հենվելով տեքստի կանխենթադրույթների վրա, համարժեք կերպով վերականգնում են ներակա տեղեկատվությունը:

Good afternoon. My name is Uldus. I am a photo-based artist from Russia. I started my way around six years ago with ironic self-portraits to lay open so many stereotypes about nationalities, genders, and social issues — ["I am Russian. I sell drugs, guns, porno with kids!"] ["Vodka = water. I love vodka!"] (Laughter) — using photography as my tool to send a message. ["Marry me, I need a visa. "]. (B. W. Ph. T. S.: 0:11-0:40)

Տվյալ օրինակը լուսաբանում է կենցաղային կանխենթադրույթների դերը տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելու, ինչպես նաև ներակա տեղեկատվությունը վերականգնելու համարժեք ընկալելու հարցում: Ելույթ ունեցողը, ով ազգությամբ ռուս ֆոտոարվեստագետ է, ներկայացնում է իր կատարած աշխատանքը, որով փորձել է լուսանկարների միջոցով կոտրել ազգությունների, սեռերի, սոցիալական դերերի վերաբերյալ կարծրատիպերը: Ֆոտոարվեստագետը խոսքը սկսում է՝ ունկնդիրներին պատմելով, որ իր գործունեությունը սկսել է մոտ վեց տարի առաջ՝ ազգային, գենդերային և սոցիալական տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ կարծրատիպեր ներկայացնող ինքնալուսանկարներ անելով: Հնչող բանավոր խոսքին զուգահեռ մեծ էկրանին ցուցադրվում են այդ լուսանկարները, որոնցից մեկում պատկերված է ելույթ ունեցողը՝ ձեռքին մի ցուցանակ, որի վրա գրված է. «Օդի=Ջուր: Ես սիրում եմ օդի (Vodka = water. I love vodka!): Երկրորդ լուսանկարում ելույթ ունեցողը պատկերված է՝ ձեռքին «Ամուսնացի՛ր ինձ հետ. ինձ վիզա է հարկավոր (Marry me, I need a visa.)» գրությունը: Տեսնելով այս լուսանկարներում պատկերված գրությունները՝ ողջ դահլիճը սկսում է ծիծաղել: Ի՞նչն է առաջացնում նրանց ծիծաղը. այն կարծրատիպերը, որ ամբողջ աշխարհին ունի ռուս ժողովրդի մասին, մասնավորապես՝ վերջիններիս մեծ սերը օդու նկատմամբ, որը, համաձայն տարածված կարծիքի, ռուսները խմում են այնքան հաճախ, որ դա համարվում է սովորական երևույթ, ինչպես

օրինակ՝ ջուր խմելը: Այս կարծրատիպը թույլ է տալիս վերականգնել տեքստի մակերեսային կառուցվածքից բաց թողնված հետևյալ տեղեկատվությունը. օդին ռուսների համար ջրի պես բան է, օրգանիզմի համար կենսական անհրաժեշտություն, առանց որի դժվար է պատկերացնել նրանց առօրյան: Այսպիսով՝ այս կարծրատիպը տվյալ դեպքում հանդես է գալիս կենցաղային կանխենթադրույթի դերում: Վերջինս ելույթ ունեցողին հնարավորություն է տալիս համապատասխան տեղեկատվությունը ներակա կերպով հաղորդելու և դրանով իսկ լեզվական միջոցներ տնտեսելու շնորհիվ հատուկ ոճական երանգավորում հաղորդել խոսքին և հումորային էֆեկտ ստեղծել: Երկրորդ լուսանկարում կենցաղային կանխենթադրույթի դերում հանդես է գալիս այն կարծրատիպը, որ հետխորհրդային պետությունների, այդ թվում՝ Ռուսաստանի քաղաքացիների համար ԱՄՆ վիզա ստանալու միջոց է ամուսնությունը ԱՄՆ քաղաքացիություն ունեցող անձի հետ: Հետևաբար ելույթ ունեցողը, քաջ գիտակցելով, որ ունկնդիրների գիտակցության մեջ նույնպես արմատացած է այս կարծրատիպը, ինչպես նաև այն, որ վերջիններս գիտեն, որ լուսանկարում պատկերված է ինքը՝ ազգությամբ ռուս կին, այս մանրամասները արտակա կերպով իր խոսքում չի ներկայացնում՝ թողնելով ունկնդիրներին վերծանել երկու պարզ նախադասության (Ամուսնացի՛ր ինձ հետ. ինձ վիզա է հարկավոր (Marry me, I need a visa.)) հետևում թաքնված այս տեղեկատվությունը: Դա թույլ է տալիս լեզվական միջոցների տնտեսմամբ խոսքն ավելի տպավորիչ, հումորով հարուստ, միևնույն ժամանակ տեղին ու ազդեցիկ դարձնել:

Այժմ դիտարկենք հանրագիտարանային կանխենթադրույթների դերը տեքստի մակերեսային կառուցվածքից տեղեկատվության որոշակի հատված բաց թողնելու հարցում, ինչը բնորոշ է գիտական խոսքին:

Այսպես՝

In a few weeks, we'll be commemorating the 50th anniversary of "the most dangerous moment in human history." Now, those are the words of historian, Kennedy adviser, Arthur Schlesinger. He was referring, of course, to the October 1962 missile crisis, "the most dangerous moment in human

history." Others agree. Now, at that time, Kennedy raised the nuclear alert to the second-highest level, just short of launching weapons. He authorized NATO aircraft, with Turkish or other pilots, to take off, fly to Moscow and drop bombs, setting off a likely nuclear conflagration. (Ch.O.W.: 34:16-35:04)

Տվյալ օրինակում Ն. Խոմսկին անդրադարձ է կատարում 1962 թվականի հոկտեմբերին Կուբայում խորհրդային միջուկային հրթիռների տեղակայման առթիվ Ամերիկայի Միացյալ Նահանգների և Խորհրդային Միության միջև տեղի ունեցած 13-օրյա բախմանը, որը պատմության մեջ հայտնի է Կարիբյան (Կուբայի) ճգնաժամ անվամբ, երբ միայն հրաշքով Սառը պատերազմը չվերածվեց նոր համաշխարհային պատերազմի: Ելույթ ունեցողը, ենթադրելով, որ մարդիկ, ովքեր եկել են ունկնդրելու իր դասախոսությունը, բավարար չափով տիրապետում են պատմությանը, ունեն համապատասխան գիտելիքներ, հարկ չի համարում մանրամասնել, թե ինչ ասել է 1962 թվականի հոկտեմբերի հրթիռային ճգնաժամ: Դրա մասին գիտելիքն այս դեպքում հանդես է գալիս հանրագիտարանային կանխենթադրույթի դերում: Այն թույլ է տալիս ելույթ ունեցողին խնայել լեզվական միջոցներն ու ելույթին հատկացված ժամանակը և դրանով իսկ ունկնդիրների ուշադրությունը հրավիրել նոր ու ավելի կարևոր տեղեկատվության վրա:

ԽՈՍԱԿԻՑՆԵՐԻ ԿԻՐԱՌԱԾ ՀԱՐԱԼԵԶՎԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՏԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆ

Անգլերեն գիտական դիսկուրսում բազմաթիվ են նաև օրինակները, որտեղ տեքստի խտացման հարցում որպես որոշիչ գործոն հանդես է գալիս իրադրությունը, որում տեղի է ունենում տեղեկատվության այնպիսի հատվածների բացթողման շնորհիվ, որոնք հնարավոր է վերականգնել հաղորդակցության պահին հաղորդակցության մասնակիցներին շրջապատող առարկաների, ինչպես նաև խոսակիցների կիրառած հարալեզվական միջոցների՝ ժեստերի ու դիմախաղի միջոցով:

Առաջին դեպքում անգլերեն գիտական խոսքում հանդես եկող խոսացումը տեղի է ունենում աղյուսակների, գծապատկերների, նկարների և այլ տեսաձայնային միջոցների առկայության շնորհիվ, որոնք ամփոփ կերպով ներկայացնում են փաստական տվյալներ պարունակող այն տեղեկատվությունը, որը ամբողջական նախադասություններով արտահայտված լինելու դեպքում ոչ միայն անտեղի կլիներ խոսողի ժամանակը, այլև անհարկի կդժվարացներ դրա ընկալումը: Ինչպես հայտնի է, թվերով արտահայտված քանակական տվյալներն առավել մատչելի և ընկալելի են, երբ տեսանելի են և ներկայացված են համակարգված ձևով: Ի դեպ, տեղեկատվության խտացման այս միջոցը հատուկ է ինչպես գրավոր գիտական տեքստերին, այնպես էլ բանավոր ելույթներին: Դիտարկենք հետևյալ օրինակը.

And that's something the oceans have been doing for us for a long time. As far back as we can go, we've seen an increase in the amount of food we've been able to harvest from our oceans. It just seemed like it was continuing to increase, until about 1980, when we started to see a decline. You've heard of peak oil. Maybe this is peak fish. I hope not. I'm going to come back to that. But you can see about an 18-percent decline in the amount of fish we've gotten in our world catch since 1980. And this is a big problem. It's continuing. This red line is continuing to go down... (S.S.O.F. W.: 1:30-2:04)

Այս օրինակը բանավոր ելույթից է, որի ժամանակ խոսողը ներկայացնում է ձկնային պաշարների քանակական փոփոխության պատմությունը՝ բանավոր խոսքն ուղեկցելով էկրանին ցուցադրվող գծապատկերով: Նա իր խոսքում նշում է, որ մինչև 1980 թվականը ձկնային պաշարները շարունակում էին աճել, որից հետո սկսում են քանակապես անկում ապրել: Սակայն բանավոր խոսքում չեն նշվում քանակական աճի և նվազման կոնկրետ ցուցանիշները՝ արտահայտված թվերով՝ ըստ տարեթվերի, որոնք, փոխարենը, ունկնդիրները տեսնում են էկրանին պատկերված գծապատկերի վրա: Բացի այդ, աճը ցույց տվող կորը գծապատկերի վրա նշված է կապույտ գույնով, իսկ նվազումը պատկերողը՝ կարմիրով, և խոսքի ընթացքում ելույթ ունեցողը, անդրա-

դառնալով ձկնային պաշարների քանակական անկմանը, նշում է. «...Այս կարմիր գիծը շարունակում է իջնել...»: Գծապատկերին նայելով՝ ունկնդիրները միանգամից հասկանում են, թե խոսքն ինչի մասին է, ինչը թույլ է տալիս ելույթ ունեցողին խուսափել ավելորդ ժամանակ և լեզվական միջոցներ վատնելուց:

Ժեստերը և դիմախաղը գրեթե միշտ ուղեկցում են բանավոր խոսքին՝ իրենց ուրույն մասնակցությունն ունենալով իմաստաստեղծման գործընթացին, ինչը դրսևորվում է դրանց իրականացրած տարբեր գործառույթների միջոցով: Մասնավորապես՝ դրանք խոսքին հաղորդում են արտահայտչականություն, իրականացնում են բացատրական և նկարագրական գործառույթ, ինչպես նաև փոխարինում են լեզվական տարրերին՝ այդպիսով հանդես գալով որպես լեզվական տնտեսման միջոց: Այս վերջին գործառույթով դրանք տեղեկատվությունը ներակա կերպով ներկայացնելու միջոցով հաճախ նպաստում են տեքստի խտացմանը:

Այսպես՝

...You know, when the telephone arrived people did not know how to deal with it. They didn't know what to say /DC gestures as if picking up the phone/: when they picked up the phone /DC gestures as if picking up the phone/ they would shout and say, "Who is that? Are you there?," and so on. Today we just go /DC gestures as if picking up the phone again/ "Hello!" or we give the telephone number /again DC gestures as if picking up the phone/ or whatever it is... (C.E.N.T.E.: 1:03-1:19)

Տվյալ օրինակը, որը Դեյվիդ Քրիսթալի՝ անգլերենի վրա նորագույն տեխնոլոգիաների ազդեցության վերաբերյալ ելույթից է, լուսաբանում է, թե ինչպես կարող է խոսողի մեկ ժեստը փոխարինել մի ամբողջ ասույթի: Խոսելով հեռախոսի նկատմամբ մարդկանց վերաբերմունքի մասին, երբ այն նոր-նոր էր գործածության մեջ մտել, Դեյվիդ Քրիսթալն ասում է. «Սկզբում մենք չգիտեինք՝ ինչ ասել»: Եվ ձեռքով շարժում է անում՝ իբր վերցնում է հեռախոսը՝ այսպիսով ընդամենը մեկ շարժումով «ասելով»՝ երբ վերցնում էինք խոսափողը: Այնուհետև շարունակում

է՝ ասելով. «Իսկ այսօր մենք պարզապես ասում ենք՝ ալո (Today we just go “Hello!”)»: Միաժամանակ ձեռքով անում է նույն՝ երևակայական խոսափողը վերցնելը պատկերող շարժումը՝ դրանով իսկ, առանց խոսքային միջոցներ գործածելու, դահլիճում ներկա գտնվողներին «ասելով». «...Իսկ այսօր մենք խոսափողը վերցնում ենք և պարզապես ասում՝ ալո»: Այսպիսով՝ խոսողը տնտեսում է լեզվական միջոցները ժեստերի օգնությամբ խոսքի ձևականորեն արտահայտված կառուցվածքից ամբողջական նախադասություններ, հետևաբար և դրանցով հաղորդվող արտակա տեղեկատվություն բաց թողնելու միջոցով: Դա ծառայում է մի քանի նպատակի՝ խուսափել անհարկի կրկնությունից, դրանով իսկ արտահայտչականություն հաղորդել խոսքին, խնայել ժամանակը՝ հնարավորինս կարճ խոսելով և, որպես վերջնարդյունք, ելույթը տպավորիչ և հետաքրքիր դարձնել դահլիճում հավաքվածների համար:

The internet arrives not so long ago. You, guys, here, most of you have never known a world without the internet, those of us who are slightly less young /DC gestures to point to himself and the man who hosts the talk/ well remember a world without the internet... (C.E.N.T.E.: 2:20-2:35)

Այս օրինակում, խոսելով այն մասին, որ, ի տարբերություն նրանց, ովքեր համեմատաբար ավելի տարիքով են, երիտասարդները չեն պատկերացնում աշխարհն առանց համացանցի, Դեյվիդ Քրիսթալը «...ովքեր համեմատաբար ավելի տարիքով են... (...those of us who are slightly less young...)» արտահայտությունն արտաբերելիս ձեռքով շարժում է անում՝ մատնանշելով իրեն և ուսանողների հետ հանդիպումը վարողին, ով իր հասակակիցն է: Այդպիսով՝ խոսողը առանց լեզվական միջոցների ճշգրտում է, թե «համեմատաբար ավելի տարիքով» ասելով՝ ում նկատի ունի: Մրանով խոսողը ոչ միայն խուսափում է ավելորդ, անհարկի ասույթի գործածությունից, այլև ավելի արտիստիկ ու անմիջական է դարձնում իր ելույթը և դրա միջոցով տեղի ունեցող շփումն ուսանողների հետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ վերաստյալին մակարդակում տեքստը սեղմելու առանձնահատկությունների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ անգլերեն գիտական խոսքում նշված մակարդակում լեզվական տնտեսման միջոցի դեր հաճախ կատարում են խոսքնկերների՝ տեքստային, կենցաղային և հանրագիտարանային կանխենթադրույթների տեսքով հանդես եկող համատեղ գիտելիքը, գրավոր կամ բանավոր խոսքին ուղեկցող գծապատկերային, աղյուսակային և այլ տիպի պատկերները, ինչպես նաև (բանավոր խոսքի դեպքում) խոսողի կիրառած հարալեզվական միջոցները: Դրանք, ծառայելով տեքստի շրջանակներում տեղեկատվության որոշակի հատված ներակա կերպով հաղորդելուն և ներակա տեղեկատվությունը համարժեք կերպով վերականգնելուն, **իրականացնում են տեքստակազմիչ գործառույթ:**

Աշխատանքի արդյունքներն ունեն կիրառական արժեք և կարող են օգտակար լինել ակադեմիական միջավայրում կիրառվող անգլերենի դասավանդման շրջանակներում, անգլալեզու գիտական աշխատություններ գրելիս, գիտական թեմաներով անգլերեն լեզվով ելույթներ պատրաստելիս և հայերենից անգլերեն գիտական թարգմանություններ կատարելիս: Այլ կերպ՝ դրանք կնպաստեն գիտական անգլերեն բանավոր և գրավոր խոսքի արդյունավետ կառուցման հմտությունների յուրացմանն ու զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Blakemore D.** (2002), *Relevance and Linguistic Meaning: The Semantics and Pragmatics of Discourse Markers*. Cambridge: Cambridge University Press, 200 p.
2. **Brown G., Yule G.** (1983), *Discourse Analysis*. Cambridge: Cambridge University Press, 283 p.
3. **Carston R.** (2008), *Thoughts and Utterances: the Pragmatics of Explicit Communication*. USA: John Walley and Sons, 432 p.
4. **Chilton P.A., Schaffner Ch.** (2002), *Themes and Principles in the Analysis of Political Discourse // Politics as Text and Talk: Analytic Approaches to Political Discourse*. USA: John Benjamins Publishing, pp. 1-44.

5. **Diessel H.** (2004), *The Acquisition of Complex Sentences*. Cambridge: Cambridge University Press, 226 p.
6. **Fairclough N.** (2003), *Analysing Discourse: Textual Analysis for Social Research*. New York: Routledge, 270 p.
7. **Gonzalez T.** (2000), *Implicitness and Ideology // Talk and Text: Studies on Spoken and Written Discourse*. Spain: Univ De Castilla La Mancha, pp. 79-96.
8. **Grice H.P.** (1989), *Studies in the Way of Words*. Harvard: Harvard University Press, 406 p.
9. **Knell S.** (2008), *A Deflationist Theory of Intentionality // The Pragmatics of Making it Implicit*. Philadelphia: John Benjamins Publishing, pp. 65-82.
10. **Ostman J.O.I.** (1986), *Pragmatics as Implicitness: an Analysis of Question Particles in Solf Swedish, with Implications for the Study of Passive Clauses and the Language of Persuasion*. USA: University of California, Berkeley, 696 p.
11. **Yule G.** (2010), *The Study of Language*. Cambridge: Cambridge University Press, 320 p.
12. **Василевский А.Л., Эдмина М.О.** (1967), *О компрессии речи на разных уровнях // Уровни языка и их взаимодействия*. Москва: Изд-во МГПИИЯ им. М.Тореза, сс. 33-38.
13. **Нефедова Л.А.** (1983), *Эллипсис в акте коммуникации*. Москва: МГУ, 24 с.

ՀԱՄԱՅԱՆՑԻ ՀՂՈՒՄՆԵՐ

1. B.W.Ph.T.S. - Bakhtiozina U. Wry Photos That Turn Stereotypes Upside Down. Ted2014, filmed March 2014. Available at https://www.ted.com/talks/uldus_bakhtiozina_wry_photos_that_turn_stereotypes_upside_down, accessed 15 September 2014.
2. C.E.N.T.E. - Crystal D. The Effect of New Technologies on English, published on 29 Nov 2013. Available at <https://www.youtube.com/watch?v=qVqcoB798Is>, accessed 1 March 2015.
3. Ch.O.W. - Chomsky N. Who Owns the World, delivered at the University of Massachusetts at Amherst, September 2012. Available at https://www.youtube.com/watch?v=_9CHtm2qK2g, accessed 19 September 2014.
4. S.S.O.F.W. - Savitz J. Save the Oceans, Feed the World. TedxMidAtlantic 2013, filmed October 2013. Available at https://www.ted.com/talks/jackie_savitz_save_the_oceans_feed_the_world/transcript?language=en#t-28016, accessed 14 August 2014.

FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 4 (13)

Չափս՝ 60x84 ¹/₁₆: Տպ. 11 մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1